№ 15 ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆՎԱՐԻ 22

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak».

ՏԷԼԷՓՈՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են հետևեալը տողատեղին 10 կոպէկ.

ՏԷԼԷՓՈՆ № 253.

կիրակի յունվարի 22 № 15

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ **1906** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՐԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ռ., տասն ամսվանը՝ 9 ռ., ինն ամսվանը՝ 8 ռ., 8 ամսվանը՝ 7 ռ., եօթ և վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։ Յունվարի 1-ից մինչև 1 յունիսի 4 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամբողջ տարի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 ռուբլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐՈՒՍԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւնը)։ Սառագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայարաններից ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առնասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Թիֆլիսի Թեմի առաջնորդը յայտնում է, որ այսօր, կիրակի, յունվարի 22-ին, առաւօտեան ժամը 11-ին, առաջնորդարանում նշանակված է Թիֆլիս քաղաքի ծխական պատգամաւորների ժողով, որ պէտք է ընտրէ ներկայացուցիչներ՝ Փոխարքայի Խորհրդին կից կայանալիք հայ-Թուրքական խորհրդակցութեան համար։ Հրաւիրվում են մասնակցելու ժողովին Թիֆլիսի եկեղեցիներից ընտրված ծխական բոլոր պատգամաւորները։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շարժութիւններ. Վերջին տեղեկութիւններ. Տեղեկութիւններ գաւառից. Դէպքերը Վրաստանում. Հայոց հարցը և նախագահ Բուշվերը. Անհնազանդելի հարցեր. Մի վաղամեռ մաս. Մակսիմ Գորկիի մի նամակը. Գանձակի նահանգապետին տրված մի զեկուցումն. Նամակ Ախալցխայից. Բազում մասնակիցների կնոջից. Մի պատգամաւորութիւն. Դարձեալ կենտրոնացման և ֆեդերացիայի հարցը. Նամակ խմբագրութեան. Վերջին հեռագիր. Ներքին լուրեր. Ռուսական տեղեկութիւններ. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Նամակ Եգիպտոսից. Նամակ Գերմանայից. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐ

IV

Ի՞նչ արժէք ունի Թուրք ներկայացուցիչների առարկութիւնը հայ յեղափոխականների գործունէութեան մասին։

Ոչինչ։

Ոչինչ այն հարցի համար, որ կոչվում է հայ-Թուրքական ընդհարում առնուազ։

Մենք անցեալ մեր յօդուածում ցոյց տուինք, որ յեղափոխական կազմակերպութիւններին վերագրած «անջատման» կամ սեպարատիզմի դիտաւորութիւնները բոլորովին անհիմն են և կազմում են անբարեխիղճ մի զրպարտութիւն հայերի վրա։

Հայերը չեն գրել անջատման հարց Կովկասի ոչ մի անկիւնում և նոյն իսկ Անդրկովկասի առաջիկայ բարեկարգութեան ծրագրի մէջ նրանք չեն նախատեղել հայկական ինքնավարութիւն, որ զուցէ դեռ տուիչ լինէր կարճատեւների համար անհիմն զրպարտութիւններ հնարելու։

Մենք ասացինք «կարճատեւների», որովհետև նոյն իսկ հայկական ինքնավարութեան գաղափարի մէջ մենք չենք տեսնում անջատում ռուսական պետական կազմից։ Ոչ։ Հայկական ինքնավարութիւնը կարող էր կապվել ռուս պետական ամբողջութեան հետ։

Բայց մենք անհնազանդարար ենք գտնում այդպիսի ինքնավարութեան ստեղծումը մեր պայմաններում և դեռ դատում ենք անդրկովկասեան ինքնավարութեան ծրագիրը։

Այդ մասին մենք արդէն խօսել ենք և դարձեալ պէտք է խօսենք։ բայց այստեղ կարևոր է ընդգծել, որ մենք ներկայումս կարճատեւների և չարամիտների ձեռքը նոյն իսկ այդ կարծեցեալ ապիթն էլ չենք տալիս և ուրեմն «անջատման» հարցի վերաբերմամբ թիւրիմացութիւններ չեն կարող լինել ոչ մի դէպքում։

Անջատման հարց չը կայ ոչ հայ ժողովրդի զանազան խաւերում և ոչ յեղափոխական կազմակերպութիւնների ծրագրերում։

Բայց Թուրք ներկայացուցիչները կարող են առարկել, թէ նրանք առնասարակ չեն պատրաստում այն բանից, որ հայերի մէջ յեղափոխականներ գոյութիւն ունեն զանազան ծրագիրներով։

Դա մեմատութիւն է։ Եւ այդ անմատութիւնը ըմբռնելը, անկասկած, ամենևին դժուար չէր. բայց մեր օրերում ամենն բան ձախ ու ծուռ է հասկացվում և շատ անհեթեթութիւններ կարողանում են որսալ միամիտների և ազդել նրանց ուղեղների վրա եթէ ոչ երկար ժամանակով, գոնէ մի յայտնի միջոցում։ Իսկ շատ անդամ հենց այդ կարճատեւ մոլորեցումն էլ բաւական է զանազան դուեր առաջ տանելու համար։

Յեղափոխականների հետ կռիւը բոլորովին ուրիշ ճանապարհով պէտք է տանեն Թուրքերը, եթէ նրանք մի առանձին առաքելութիւն են վերցրել իրանց վրա այդ գործում։ Իսկ սկսել կոտորել հայերին այն պատրուակով, թէ հայերի մէջ գոյութիւն ունեն յեղափոխականներ, և մի և նոյն ժամանակ շատ լաւ բարեկամ լինել ուրիշ ազգերի հետ, որոնց մէջ նոյնպէս կան ոչ պակաս թւով և նոյն իսկ աւելի մեծ քանակութեամբ յեղափոխականներ, չէ կարող ոչ ոքի համոզել թէ այստեղ մենք գործ ունենք ուղիղ այն շարժառիթի հետ, որը դնում են մեր առաջ իբրև էական մի բան։

Ուրեմն, դա պատրուակ է միայն և ոչ իսկական շարժառիթ։ Եւ եթէ նա ներկայացվում է իբրև շարժառիթ, դա կամ մոլորութիւն է կամ կեղծիք։

Բայց այստեղ կարևոր է ընդգծել և հեռանալ հանդամանքը։ Եթէ այդ շարժառիթը նոյն իսկ որոշ հիմունքներ ունենար, միթէ նա պէտք է կոտորածների և ջարդերի վերածվէր և այն էլ ուղղված բոլոր ազգի դէմ, ժողովրդական մասսաների դէմ։

Ի՞նչ կապ կարող է լինել յեղափոխականներին հարածելը այն բանի հետ, որ Թուրքերը սարսռում էին Բաղամրեի, Մինքենդի, Բաղայի, Կրզանի և ուրիշ գիւղերի հայերին ընդունել մահմեդականութիւն։ Միթէ վերջիններիս հաւատափոխ լինելը Թուլացրեց որ և է յեղափոխական ոյժ, միթէ նա ընդհակառակը աւելի մեծ յանդգնութիւն չառաջացրեց ժողովրդի զանազան խաւերում և նոյն իսկ աւելի չը նպաստեց յեղափոխական տրամադրութիւնների զարգանալուն։

Այդ շարժառիթներով առաջնորդվելը և կատարած ու սարսափներ կատարելը ամենևին չեն նպաստում ոչ մի բարի գործի իրականացման, այլ ընդհակառակը, շատ և շատ մեծ վիներ են բացառում հարկան ազգութիւնների մէջ. վիներ, որոնք յետոյ հեշտ չէ սրբել և փակելը։

Մենք, լինելով մի երկրի ժողովուրդներ, պէտք է մեր կեանքը կազմակերպենք կուլտուրական ձգտումների ու միջոցների վրա և նրանցով կապվենք միմեանց հետ։ Զարդը, կոտրածը, հրդեհը, բռնի հաւատափոխութիւնը ամենևին լաւ դեկավարներ չեն համերաշխութիւն և փոխադարձ մտերմութիւն հաստատելու համար։

Իսկ մեր ցանկութիւնը և ձգտումները միայն այդ պէտք է լինեն։

Ուրիշ ճանապարհ չը կայ։

Ա. Բարանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուշի. Յունվարի 15-ին, երեկոյեան ժամի 6-ին մօտերքը վերջացաւ հայերի և Թուրքերի ներկայացուցիչների խորհրդակցութիւնը և կայացաւ նրանց մէջ հաշտութիւն։

Երևանից, յունվարի 20-ին հեռագրում են. «Յունվարի 20-ին, երեկոյեան 6 ժամին, 16 վերստ հեռաւորութեամբ Երևանեան գծից, Սանդալ - Սօղանլուի կարաւանների մէջն, չափազանց արագընթաց լինելու պատճառով խորտակվեց ապրանքատար գնացքը։ Զարդվեցին 20 վագոն։ Առ այժմ գտնված են միայն մէկ սպանված և տասը վիրաւորներ։ Կոտրված վագոնների տակ դեռ կարող են գտնվել սպանվածներ»։

Զիբուխու (Նոր-Բայազէտի գաւ.) յունվարի 20-ին.

Թօխլու-Չա Թուրքարտակ գիւղից մեզ միշտ սպառնալիքներ էր գալիս քիւրդ չօպանների միջոցով. մենք ի հարկէ մասն լինելով մեր բարի հարևանութեան վրա, չէինք կարծում, որ Թոխլու-Չեպիք կանեն այն ասուր գազանութիւններն, որի նման արեցին նրանց եղբայրներից շատերը Կովկասի մի քանի տեղերում։ Ամսիս 12-ին երեկոյեան ժամի 9½-ին մի քանի սրիկայ Թուրքեր Թոխլուից ուղարկված են լինում Գիւնէ կոչվող կողմից ոչխարներ թալանելու համար։ Այդ կոչվող կողմերից, որտեղ ամեն տարի մեր գիւղի ոչխարներն են լինում, (այս տարի գիւղն է բերված) սրիկաները տեսնում են ոչ ոչխար կայ և ոչ մարդիկ, որ սպասեն, ուստի իրանց ժեռերի մօտ պարզերես դուրս գալու համար նրանց գազանային հաճոյքը կատարելու համար, ուզում են առպատճառ վնաս հասցնեն մեր գիւղին, և փորձում են մօտենալու, ու 3 վերստ հեռաւորութեան վրա, սկսում են հրացան արձակել, որի ձայնից գիւղի պահապանները ամբողջ գիւղը ասի կանգնացրին թէ ահա Թուրքերն յարձակվում են գիւղի վրա—իսկ այդ վախտա ուսապները հեռացան. բայց մի և նոյն ժամանակ լաց ու կոծի ձայները, կանանց ճիչը, երեխայոց ազիազորմ լացը, լսողի սիրտը կոսը-կոսը էին անում. դա մի փոքր էր նրանց կողմից...

Տիգրան Տէր-Սահակեանց

Բարմանարայից հեռագրում են մեզ յունվարի 20-ից.

«Դեռ ևս գերի են Թուրքերի Խինալու գիւղում 15 հայեր. Գրիգոր քահանայ Տէր-Արահամեանց, Դանրաման Դանիէլեանց ընտանիքով (5 հոգի) Ալլահվերդէկ Զիւլզադարովի մօտ։ Իսկ Աւետիք Լեոնտեանց ընտանիքով (5 հոգի), Գրիգոր Արզումանեան ընտանիքով (5 հոգի) գաղտնի գերի են մաշադի Ասկերի մօտ, որը Զիւլզադարովի գիւղացին է։ Ամենքը բաղաքենոյդներ են։ Մաշադու մօտ գրանց սպառնում է անխուսափելի մահ։ Անհրաժեշտ է ձեր շուտափոյթ միջամտութիւնը»։

Զուարթնոց

«Կովկազ» թերթը հաղորդում է, որ Շուշուց քաղաքագլուխ պ. Բալանթարովը հեռագրում է Թիֆլիսի քաղաքագլխին. «Գենեռալ Գոլոշչապովի զօրամասով այստեղ գալուց յետոյ քաղաքում հանգստութիւն հաստատված է։ Կեանքը մտաւ իր սովորական ընթացքի մէջ։ Գենեռալ Գոլոշչապովի հրամանով հայերից և Թուրքերից պատգամաւորներ գնացին գէպի Եալամ և Գօրիս տարածքը բանալու և յայտարարելու շրջանայ ազգաբնակութեանը հիմնաւոր հանգստութիւն կապելու մասին։ Ցոյս ունեմ, որ այլ ևս ոչ մի թիւրիմացութիւն եղբայրակից ազգերի մէջ չի պատահի»։

Ի լրումն մեր երեկվայ հաղորդած հեռագրի՝ յայտնում ենք «Կովկազից» քաղելով, որ յունվարի 18-ին Շուշուց ճանապարհվել են դէպի Եալամ կայարանը Թուրքերի ու հայերի ներկայացուցիչները՝ Շուշվայ զաղին, Ներսէս վարդապետը, բժիշկ Մեխմանդարովը և Բանաթրեանը, քաղաքացիներ Գերասիմ Շանազարեան և Զհանդիրեան Նաբիրէգովը, միջոցներ ձեռք առնելու Շուշու և Զիվանիրի գաւառներում հայ-Թուրքական ընդհարումների վերջ տալու և Եալամ-Շուշի տրակտի վրա գտնվող ազգաբնակութեանը խաղաղացնելու համար։

Կարսի շրջանի զինուորական նահանգապետը զեկուցանում է Կովկասի ռազմական կառավարչին յունվարի 11-ից, որ անցեալ շաբաթվայ ընթացքում Կարսի շրջանի մէջ հանգստութիւն էր տիրում և գոյութիւն ունեցող պետական կարգի համար վտանգաւոր քաղաքական բնաւորութեան ուշադրութեան արժանի երևոյթներ չը կային։

Մասայածին են գործակալութեան հեռագիրների մէջ յունվարի 7-ից երևցած տեղեկութիւնները այն մասին, որ իբր թէ Կարսի շրջանի մէջ թարաւորում է մահմեդական շարժումը։ Կարսի շրջանի մահմեդական ազգաբնակութեան մէջ ոչ մի շարժում գոյութիւն չունի ուրիշ ազգութիւնների դէմ, որի մասին հաղորդել են Փոխարքային։

Յունվարի 18-ին, Թիֆլիսի քաղաքագլուխը ստացաւ քաղաքի լուսաւորութեան գործակալ Լալայեանից մի գեղագրում այն բանի մասին, որ Թուրքերը խանգարում են վառելու լապտերները։ Յունվարի 17-ին ֆայէտոնով գնացող Թուրքերը ստրանամակ են արձակել լապտերի վառողների վրա։ Լապտերի վառողները այդ պատճառով անկարող են կատարել իրանց պաշտօնը։ Լալայեանցը խնդրում է քաղաքային վարչութեան կողմից աջակցութիւն ստանալու լապտերի վառողների անձի և գոյքի յարձակվողներին։

Յունվարի 16-ին Թուրքաց թաղում (6-դ քաղաքամասում) Թուրքերի կողմից անսպասելի հրացանագրութիւնից վէրք էր ստացել՝ մի միջի այլոց՝ Նոր-Բայազէտի Առաքել Բուլղարեանը, որը քիսաչի էր եղը։ Մի բրդոյանների քաղաքերում։ Այս պանդուխտ և անմեղ հայն յունվարի 20-ին փոխանցվեց 50 ամեայ հասակում և թաղվեց յունվարի 21-ին՝ թաղելով իր 7-ը որդիներին դեռն իրանցի վիճակի մէջ։ Հրացանագրութեան ժամանակ յիշեալ բաղանիքի բոլոր քիսաչիները փախչում են բաղանիքներից և հասնելով Բօռանիկական այգու ներքին ծայրը՝ լում են Թուրքերի գոռոցը՝ «գեղարլրար» (գալիս են), սրան հետևում է հայհոյանք և հրացանագրութիւն, որի ժամանակ մէջքի կողմից հանգուցեալը վէրք է ստանում։ Բացի այդ, նոյն օրը Սատում գիտնականութեամբ պարարող Միրէշեն Ոսկանեանցը ստանում երկրորդ գրագիր Լիւում և փոխանցվում Միքայէլեան հիւանդանոցում, որի թաղումը նոյնպէս կատարվեց յունվարի 21-ին։ Հետաքրքիր էր իմանալ թէ Թուրքերի թաղի ոստիկանութիւնը և քննիչը ինչ տեսակ քննութիւններն են կատարել յիշեալ տեղեկութիւնները։

Թավ թեկնածուներ բանաների և Սամալիի համար։

Անցեալ օգոստոսին տեղական թեկնածուների տեղական ընտրիչները Հաջիքեանդ ամբանոցում ունկնդրութիւն էին ունենում Բաղուից եկած երկու զրական մեծ գիտնականների մօտ։ Դաշնակցականների պաշտպան ժամանակը և Գանձակի խանութները կողոպտելիս, հայերին կոտորելիս, տունը և խանութները հրդեհելիս թեկնածուները նոյնքան ուշադրաւոր բամամ լարդիների հետ ձեռք ձեռքի տուած՝ խուժանի ուսանողներն էին կազմում։

Երկու Թուրք անասնասպանները՝ Զաբրաթը և Ղուրբանը, երկու ուրիշ Թուրքերի հետ գնում են ժամում և ոչխարասպան փայտ կառուցող (վառելու համար) Պօղոս Սարգսեանին և Պօղոս Յովհաննիսեանին գնդակահար անում։ Առնելով այդ լոթը՝ տեղիս ծերունի ալեզարդ Միքայէլ քահանան նեռվում է տէրտերի տեղը հարդրելու վիրաւորներին, բայց արիւնածարաւ գազանները՝ չը բաւականանալով առաջին գոնտրով, գնդակահար են անում և քահանային։ Մի քանի օրից յետոյ ծերունի Յարութիւնը սպանվեց անտառում երեք Թուրքերի ձեռքով։

Եղեռնագործները յայտնի են անհերքելի փաստերով, արձանագրութիւններ են կազմված և յանձնված զանազան իշխանութիւնները, որի գործունէութեան հետևանքը օրինական անդամահատութիւնից և հայերի դէմ՝ հանդիսատես ապրելու համար՝ դալի ուտեսարան կարդալուց զէնը չէ անցնում։ Այն, ընթերցող, Բաղդերը և Սամալիները անարգել անարգել կոտորում, յօշոտում և կողոպտում են, ունենալով ամենակատարեալ դէնքեր—այդ ոչինչ, բայց պ. պրիստաւը շատ նեղանում է, ուստիու և քնելու տեղ չունի կրգնում, երբ տեսնում է իր պրիստաւի անասրբերութեան պատճառով հայ խաղաղասէր շինականը կրում է մի հատարակ և անպէտք բերդանի հրացան։

Ռամիօրէն ասում են—այծը էշին չէ պատում, համեան է ծեծում։ Հինգ վեց օր սրանից առաջ այդ պրիստաւի երեք ռուս սարաժներները գնում են Շամալդարա Թուրք գիւղը, Թուրքերը երեքին էլ զինաթափ են անում, գիւղերը կաղանատրած պահում, մի քանի անգամ դաշտնով ուղում են, մորթասել, վերջ է վերջոյ կենդանի արձակում են առանց զէնքերի։ Նիկ. Դրիգորեանց

Շամշուլդա, յունվարի 10-ին։ Թրամ գնամ հարաւային կողմում գտնվում է Շամշուլդա գիւղը, որը բաղկացած է 200 տնից։ Այս ապրան-թալանի ժամանակ, անցեալ գեկտեմբեր ամսին, այս գիւղում պատահեց մի այսպիսի դէպք։

Հայերը նեղութեան մէջ լինելով Թուրքերի ձեռքից, ուզում էին հաշտվել, բայց Թուրքերը պատասխանում էին, թէ մենք մեր արիւնը չենք Թողնի, վրէժը կառնենք։ Այդ ժամանակ Շամշուլդա գիւղից մի երիտասարդ «Վանէ» անունով, ասաց Թրամը իր օչխին նայելու. դա պէտք է անցներ Շեբլու Թուրք գիւղի միջով. դրան տեսնելով երեք Թուրք, բռնում են, ձեռքերը կապում, շատ ծեծում և ուզում են գերի տանել իրանց գիւղը, երբ դա յանկարծ փախչում ընկնում է ջուրը Թրամ գետում, և այդ ջրի մէջ մի արբ գտնելով Թաց է կենում մի ամբողջ օր ու գիշեր։

Ընթերցող, դուք կարող էք երևակայել թէ ամբողջ օր ու գիշէր ջրի մէջ մնալով ինչ կը պատահէր դրա հետ. երիտասարդը տանջելով, որ այլ ևս չէ կարող մնալ այդտեղ, որովհետև ջրից ուռչել է սկսում, էկս գիշերին դուրս գալով ջրից։ մի կերպ գնում հասնում է Թուրեանի գիւղը։ Այդտեղ դրա վրա խնամք են տանում, ջրից զոյացած վէրքերը բուժում են և նա մի քանի օրից յետոյ գնում յայտնվում է իր գիւղում, Շամշուլդում։

Այդ դէպքի միւս օրը Կիսնէթից սուրսանդակ եկաւ և հայ կարիճներին օգնութեան կանչից ասելով «հասէք Կիսնէթի, գիւղացիներին կոտորում, թալանում են»։ Լսելով այդ, խևոյն կարիճները զինվեցին, ձիեր նստան, գնացին դէպի կուի դաշտը։ Անցնելով Շեբլու գիւղի մօտով, Թուրքերը տեսնում են այդ անվանի զինուորներին։ Հետևեալ օրը այդ դիւցազի Թուրք Մամադ-օղլին կանչել է իր գիւղացիներին և ասել է՝ «սրանք մեզ կը կոտորեն, մենք սրանց ոչինչ չենք կարող անել, ամառը սար գնալու չեն Թողի մեզ, եկէք հաշտվենք»։ Մարդ ուղարկեց հայերի մօտ՝ որ հաշտվեն, ասելով, որ «մենք մեզաւոր չենք, մեր խաներն ու բէգերն են մեզ տարուժ»։ Հայերը՝ պատասխանել են «մեր վնասը տուէք, և մենք կը հաշտվենք»։ Ահա այսպիսի կեանք է վարում հայ գիւղացին։

Օր. Զայնիկ

Շուլաւէր յունվարի 13-ին։ «Մշակի» № 5-ի մէջ մի սխալ լուր կար տպված, իբր թէ Շուլաւէրում մէրտութեան օրը անպայտ չաղարդծները ապանել են ոստիկանական պահակի մի աւազ պահապանի ու այդ ապանութիւնը շուլաւերցիների մէջ սարսափ աւելի սատկացրել է։

Ամբիոնը, աւագ պահապան Դիմիտրուխան, որը յայտնի էր որպէս լաւ մարդ, սպանվել է Շուլաւէրից 5 վերստ հեռաւորութեան վրա երկու յայտնի յանցաւորների ձեռքով, որոնք և խլեցին իրանց յանցանքը խոստովանելուն նրանցից մէկը մինչև անգամ խլելով մի պահակից դաշտիկը՝ խրկել էր իր փորը, բայց վէրքը վտանգաւոր չէ։

Իսկ ինչ վերաբերում է նրան, որ այդ դէպքի ապիթով շուլաւերցիների մէջ սարսափը աւելի սատկացել է, դա մեծագոյն զրպարտութիւն է։ Սատուն ինքը սարսափահար է եղել, իսկ եթէ մեր սանուաբերը զանազան նպատակներով օգնութիւն կամ զէնք է խնդրում, դա երբէք վախկոտութիւն չէ։ Շուլաւերցիք պիտի լուրջ զգաստանան։ Ով որ ծանօթ է Շուլաւէրի տեղագրական դիրքերին ու գիտէ, որ նա շրջապատված է տասն անգամ շատ Թուրքերով, նա երբէք չէ կարող տեղագրել մեզ։ Ցանկալի կը լինէր, որ ոչ մի հայ, կամ Թուրք երբէք յիմարի պէս չը պարծենային, Թէ ով շատ է սպանում. երկուսն էլ իրա նահատակներ են։ Մենք ու մեր հարևան Թուրք գիւղացիները աւելի շատ պարծենալու իրաւունք կունենային, եթէ մեր մէջ երբէք զուր արիւն չը Թափվեր։ Իսկ մեր հարևաններին լաւ յայտնի է, որ եթէ նրանք խրվեն զանազան հանցանքներից ու հիւանդներից և յարձակվեն մեզ վրա, իրանց շատ էլ էժան չի նստի։

Թող համոզված լինի պ. լրատուն, որ մենք շուլաւերցիներս կը կռուենք մէկս տասի դէմ, թեկուզ յարձակվենք էլ և երբէք իր պէս նապատակներից օգնութիւն չենք խնդրի։

Կաթ.

ԴԷՊՔԵՐԸ ՎԱՆԱՅՍԱՆՈՒՄ

Երէկ յունվարի 20-ին, «Ցնոր Փարցելի» խմբագրատունը մտել են Լամբարանց գիւղի (Գօրիս գաւ.) մի քանի բնակիչ և պատմել են հետևեալը. «Յունվարի 18-ին մեր գիւղը եկան 80 զինված կոզակ ձիաներով և ուղղակի մտան իշխ. Նիկոլայ Դ. Էքիտովի տունը (նախկին պոդպօրուչիկ, այժմ ծառայութիւնից արձակված)։ Այս կոզակներին զեկավարում էր մի օֆիցեր։ Այդ տան մօտ հաւաքեցին տանպէն թուով գիւղացիներ և ասացին. «Այս բօպէիս պէտք է տաք 27 բերդան հրացան, որոնք մեզ կը կոտորեն, մենք սրանց ոչինչ չենք կարող անել, ամառը սար գնալու չեն Թողի մեզ, եկէք հաշտվենք»։ Մարդ ուղարկեց հայերի մօտ՝ որ հաշտվեն, ասելով, որ «մենք մեզաւոր չենք, մեր խաներն ու բէգերն են մեզ տարուժ»։ Հայերը՝ պատասխանել են «մեր վնասը տուէք, և մենք կը հաշտվենք»։ Ահա այսպիսի կեանք է վարում հայ գիւղացին։

Օր. Զայնիկ

Շուլաւէր յունվարի 13-ին։ «Մշակի» № 5-ի մէջ մի սխալ լուր կար տպված, իբր թէ Շուլաւէրում մէրտութեան օրը անպայտ չաղարդծները ապանել են ոստիկանական պահակի մի աւազ պահապանի ու այդ ապանութիւնը շուլաւերցիների մէջ սարսափը աւելի սատկացրել է։

Ամբիոնը, աւագ պահապան Դիմիտրուխան, որը յայտնի էր որպէս լաւ մարդ, սպանվել է Շուլաւէրից 5 վերստ հեռաւորութեան վրա երկու յայտնի յանցաւորների ձեռքով, որոնք և խլեցին իրանց յանցանքը խոստովանելուն։ Նրանցից մէկը մինչև անգամ խլելով մի

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

Ոսկանապատ, յունվարի 14-ին։ Մահմեդական տարի գործած անլուր անգթութիւնները այստեղ ևս զգալ տուեցին իրանց հայ գիւղերին։ Երէկ Միրզիկ գիւղի հանդից ութ սպառազինված Թուրքեր՝ ծանր վիրաւորելով հովուին՝ քշեցին հօրը 350 ոչխարից բաղկացած։ Գանձակի ազգեան երրորդ օրը տիրոջ հոգեկան Թոխլամանդի մօտ սպանվեցին երկու ոսկեմապացի սայլապաններ՝ Կարապետ և Աւետիս, աւազակաբարոյ և արիւնարուշ Ասաղ և Սարան եղբայրների ձեռքով։ Քանի օրից յետոյ նոյն այդ աւազակները Եկեղեցաձորից ոչ այնքան հեռու ճանապարհին, գերմանացիների այգիներից, մօտիկ հրացանով ծանր վիրաւորեցին ածխարար Միրզին, որը գալուին հիւանդացում նոյն օրը վախճանվեց։ Թէ առաջին զոհերից Կարապետը և թէ Միրզան քնինչի և այլ պոռնիճանաւորների մօտ անդադար կրկնելիս են եղել յանցագործների անունները, բայց և այնպէս մինչև օրս էլ նրանք ազատ շրջում են, նարանոր գոհերի հանդիպելու։ Թօխլամանդան Եկեղեցաձորից երեք վերստի վրա՝ ճանապարհի մօտ գտնվող այն աւազակային որջն է, որ խաղաղ ժամանակն էլ սարսափի մէջ է պահում թէ շրջակայ հայ գիւղերը, թէ գերմանացիներին և թէ զանազանցի հարևին, տալով բաւական

Ոսկանապատ, յունվարի 14-ին։ Մահմեդական տարի գործած անլուր անգթութիւնները այստեղ ևս զգալ տուեցին իրանց հայ գիւղերին։ Երէկ Միրզիկ գիւղի հանդից ութ սպառազինված Թուրքեր՝ ծանր վիրաւորելով հովուին՝ քշեցին հօրը 350 ոչխարից բաղկացած։ Գանձակի ազգեան երրորդ օրը տիրոջ հոգեկան Թոխլամանդի մօտ սպանվեցին երկու ոսկեմապացի սայլապաններ՝ Կարապետ և Աւետիս, աւազակաբարոյ և արիւնարուշ Ասաղ և Սարան եղբայրների ձեռքով։ Քանի օրից յետոյ նոյն այդ աւազակները Եկեղեցաձորից ոչ այնքան հեռու ճանապարհին, գերմանացիների այգիներից, մօտիկ հրացանով ծանր վիրաւորեցին ածխարար Միրզին, որը գալուին հիւանդացում նոյն օրը վախճանվեց։ Թէ առաջին զոհերից Կարապետը և թէ Միրզան քնինչի և այլ պոռնիճանաւորների մօտ անդադար կրկնելիս են եղել յանցագործների անունները, բայց և այնպէս մինչև օրս էլ նրանք ազատ շրջում են, նարանոր զոհերի հանդիպելու։ Թօխլամանդան Եկեղեցաձորից երեք վերստի վրա՝ ճանապարհի մօտ գտնվող այն աւազակային որջն է, որ խաղաղ ժամանակն էլ սարսափի մէջ է պահում թէ շրջակայ հայ գիւղերը, թէ գերմանացիներին և թէ զանազանցի հարևին, տալով բաւական

պահակից դաշտիկը՝ խրկել էր իր փորը, բայց վէրքը վտանգաւոր չէ։

Իսկ ինչ վերաբերում է նրան, որ այդ դէպքի ապիթով շուլաւերցիների մէջ սարսափը աւելի սատկացել է, դա մեծագոյն զրպարտութիւն է։ Սատուն ինքը սարսափահար է եղել, իսկ եթէ մեր սանուաբերը զանազան նպատակներով օգնութիւն կամ զէնք է խնդրում, դա երբէք վախկոտութիւն չէ։ Շուլաւերցիք պիտի լուրջ զգաստանան։ Ով որ ծանօթ է Շուլաւէրի տեղագրական դիրքերին ու գիտէ, որ նա շրջապատված է տասն անգամ շատ Թուրքերով, նա երբէք չէ կարող մեզ զրպարտել։ Ցանկալի կը լինէր, որ ոչ մի հայ, կամ Թուրք երբէք յիմարի պէս չը պարծենային, Թէ ով շատ է սպանում. երկուսն էլ իրա նահատակներ են։ Մենք ու մեր հարևան Թուրք գիւղացիները աւելի շատ պարծենալու իրաւունք կունենային, եթէ մեր մէջ երբէք զուր արիւն չը Թափվեր։ Իսկ մեր հարևաններին լաւ յայտնի է, որ եթէ նրանք խրվեն զանազան հանցանքներից ու հիւանդներից և յարձակվեն մեզ վրա, իրանց շատ էլ էժան չի նստի։

Թող համոզված լինի պ. լրատուն, որ մենք շուլաւերցիներս կը կռուենք մէկս տասի դէմ, թեկուզ յարձակվենք էլ և երբէք իր պէս նապատակներից օգնութիւն չենք խնդրի։

Կաթ.

ԴԷՊՔԵՐԸ ՎԱՆԱՅՍԱՆՈՒՄ

Երէկ յունվարի 20-ին, «Ցնոր Փարցելի» խմբագրատունը մտել են Լամբարանց գիւղի (Գօրիս գաւ.) մի քանի բնակիչ և պատմել են հետևեալը. «Յունվարի 18-ին մեր գիւղը եկան 80 զինված կոզակ ձիաներով և ուղղակի մտան իշխ. Նիկոլայ Դ. Էքիտովի տունը (նախկին պոդպօրուչիկ, այժմ ծառայութիւնից արձակված)։ Այս կոզակներին զեկավարում էր մի օֆիցեր։ Այդ տան մօտ հաւաքեցին տանպէն թուով գիւղացիներ և ասացին. «Այս բօպէիս պէտք է տաք 27 բերդան հրացան, որոնք մեզ կը կոտորեն, մենք սրանց ոչինչ չենք կարող անել, ամառը սար գնալու չեն Թողի մեզ, եկէք հաշտվենք»։ Մարդ ուղարկեց հայերի մօտ՝ որ հաշտվեն, ասելով, որ «մենք մեզաւոր չենք, մեր խաներն ու բէգերն են մեզ տարուժ»։ Հայերը՝ պատասխանել են «մեր վնասը տուէք, և մենք կը հաշտվենք»։ Ահա այսպիսի կեանք է վարում հայ գիւղացին։

Օր. Զայնիկ

Շուլաւէր յունվարի 13-ին։ «Մշակի» № 5-ի մէջ մի սխալ լուր կար տպված, իբր թէ Շուլաւէրում մէրտութեան օրը անպայտ չաղարդծները ապանել են ոստիկանական պահակի մի աւազ պահապանի ու այդ ապանութիւնը շուլաւերցիների մէջ սարսափը աւելի սատկացրել է։

Ամբիոնը, աւագ պահապան Դիմիտրուխան, որը յայտնի էր որպէս լաւ մարդ, սպանվել է Շուլաւէրից 5 վերստ հեռաւորութեան վրա երկու յայտնի յանցաւորների ձեռքով, որոնք և խլեցին իրանց յանցանքը խոստովանելուն։ Նրանցից մէկը մինչև անգամ խլելով մի

Ալեքսանդրապոլ, յունվարի 10-ին։ Թրամ գնամ հարաւային կողմում գտնվում է Շամշուլդա գիւղը, որը բաղկացած է 200 տնից։ Այս ապրան-թալանի ժամանակ, անցեալ գեկտեմբեր ամսին, այս գիւղում պատահեց մի այսպիսի դէպք։

Հայերը նեղութեան մէջ լինելով Թուրքերի ձեռքից, ուզում էին հաշտվել, բայց Թուրքերը պատասխանում էին, թէ մենք մեր արիւնը չենք Թողնի, վրէժը կառնենք։ Այդ ժամանակ Շամշուլդա գիւղից մի երիտասարդ «Վանէ» անունով, ասաց Թրամը իր օչխին նայելու. դա պէտք է անցներ Շեբլու Թուրք գիւ

Յունվարի 7-ին բանտարկեցին Բութայիսի քաղաքային վարչութեան անդամ Կանդէլակիին, երդուեալ հաւատարմատար Մ. Կիկոձէին, «Նադէժդա» ընկերութեան գործակալ Ճիլաձէին, Ս. Զափարիձէին և ուրիշներին։

Գեներալ Ալիխանովի կարգադրութեամբ Բութայիսի ոստիկանապետ Ա. Կլիմենտիեվ արձակված է պաշտօնից։ (Ցնորթ Փոբցէլի)։

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ԵՒ ՆԱԽԱԳԱՀ ՐՈՒԶՎԷԼՏ

Երէկ, Ամերիկայի «New York Sun» լրագրից քաղելով հաղորդել էինք որ, հայոց հարցի համար նախագահ Ռուզվէլտին պետիցիայով դիմել են Ֆրանսայի, Իտալիայի, Անգլիայի նշանաւոր հասարակական և պետական գործիչները և խաղաղասէրները։ Առաջ ենք բերում յիշեալ պետիցիայի բովանդակութիւնը։

«Մենք չենք կասկածում, որ Դուք նոյնպէս, ինչպէս և մենք, խորապէս զգացած եք հայ ժողովրդի արագական վիճակով, ժողովրդի, որ նոյն ծագումն ունի, ինչ և մենք և կարիւր դեր է խաղացել ամենահին ժամանակներից քաղաքակրթութեան զարգացման մէջ։ Այդ ժողովուրդը այժմ հայցրված է կառաւարել յուսահատութեան և նրան հալածում են ոսպանում այն անգթութիւնները և բռնութիւնները, որոնք մեծամամ են անպատիժ, կատարվում են նրան շրջապատող բարբարոս մուսուլման ցեղերի ձեռքով և որոնց նպաստակն է ջնջել նրա գոյութիւնը։ Այդ չարաբաստիկ երկիրներում ապրող և ճանապարհորդող եւրոպացիների ու ամերիկացիների վկայութիւնները և դիպլոմատիական գործակալների պաշտօնական զեկուցումները միաձայն հաստատում են այն ամենը, ինչ որ մենք ասացինք հայերի վիճակի մասին և հաղորդում են ամենաճշգրիտ և ցնցող մանրամասնութիւններ։ Հայ ժողովրդի համար չը կայ այլ ելս ոչ մի ապահովութիւն, ոչ նրանց գոյքի, ոչ կեանքի և ոչ տարաբդկանց ու կանանց և երեխայոց պատուի համար։ Հարաւնակ կազմակերպված աւազակախմբեր, որոնք կառաւարար գործում են Ասիայում, սպառնում են նրանց կոչոչմամբ, յափշտակութեամբ, բռնութեամբ և կոտրածով։ Ուստի մենք դիմում ենք ձեզ, պ. նախագահ, խնդրելով ձեզ միջամտել այն ձևով, որը գուցէ յարմար կը գտնէք և որը կը լինի հեղինակաւոր օրգան քաղաքակիրթ ազգերի կարծիքների այն կատարարութիւնների առաջ, ուր կատարվում են այդ վայրագ սեսարանները։ Մենք համարձակում ենք՝ յուսալ, որ ձեր համակրական ձայնը կը լսվի ուսաց վեհապետի կողմից, որ արդէն յայտնի է իր մարդասէր դիտաւորութիւնները և ցանկութիւն է արտայայտել նուիրագործել նրանց միջազգային համաձայնութիւններով։ Մենք խնդրում ենք ձեզ վերցնել ձեր վրա նախաձեռնութիւն և առանալ օգնութիւն պետութիւնների կողմից, որպէս զի կարողանաք տալ, վերջապէս, Օսմանեան կայսրութեան հպատակներին այն հասարակական հանգստութիւնը և ընդհանուր կարգ, որ բացակայութիւնը հասցրեց այդ կայսրութիւնը այդպիսի թշուառութիւնների և որը սպառնում է վերջնալ նրա կատարեալ կործանմամբ»։

Այս պետիցիան ստորագրել են Ֆրանսիայում—Բերտոլտ, Լէոն Բուրժուա, Ֆ. Կոշէն, Բրեան, Էռուրէլ-զը-Կոնտոն, Ֆ. Պանսի, Լբրուա-Բոլիէօ, Կրուպէ, Կլարէտի, Հ. Պէվի Բրէալ, Բէշնակ. Իտալիայում—Ասկոլի, Բոսսի, Սակկի. Անգլիայում—Բելֆօրդի դքսուհին, պրոֆ. Հարրիս, Մորրիսոն, Բեկսոն, Ա. Սթէդ։

Ինչպէս անցեալ անգամ ևս նշանակեցինք, մենք առաջարկում ենք Ռուսաստանի հայ ազգին ևս, ի դէմս ներկայացուցչների, նոյնպիսի պետիցիայով դիմել Ռուսաց Թագաւոր Կայսրին։ Այդ պետիցիայի կազմակերպութեան մասին մենք շուտով կը խօսենք։

ՄՏԵՐԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

XXVI

Իմ խօսքս այս անգամ ուղղում եմ հայ ուսանողներին, գլխաւորապէս Եւրոպայի հայ ուսանողներին։

Մեր խմբագրութիւնը շարունակ ստանում է նամակներ Եւրոպայի զանազան կենտրոններում գտնվող հայ ուսանողներից, խնդրելով խորհուրդ տալ, թէ ինչ պէտք է անեն ուսանողները հայութեան ներկայ տագնապալից օրերում։

Եւ այդ շատ հասկանալի է։

Օրեց օր հայրենիքից ուսանողները սոսկալի, օրատամիկ լուրեր են ստանում։ Նրանք կարդում են լրագիրներում թէ ամբողջ գիւղեր, ամբողջ քաղաքներ, գաւառներ հրոյ և սրոյ ճարակ են դառնում, աւերվում, կործանվում են, հարիւրաւոր անմեղ ժողովրդի արիւնն է թափվում, որ սիրելի հայրենիքում ստեղծվել է մի կատարեալ դժոխք, որ Ժողովուրդը, սիրելիները օգնութիւն, պաշտպանութիւն են հայցում, դեղ և դարման են խնդրում իրանց ցաւերին, սպեղանի՝ իրանց վէրքերին։ Եւ ուսանողութիւնը, որ միշտ ապրել է իդէալների, վեհ գաղափարների, բարձր թռիչքների, մարդասիրական և հայրենասիրութեան վսեմ զգացմունքների մթնոլորտում, բնականաբար, չէ կարող չը յուզվել, չարկոծվել, չէ կարող չը վառվել անհչանքով՝ վառել, սրանալ հայրենիքի օգնութեան։

Եւ ահա խռովում, ալեկոծում, ըմբոստութիւն հոգու՝ «մթթէ մենք պէտք է շարունակենք մեծ սուտ հանդիսատեսներ՝ մեր հայրենիքը փոթորկող ահաւոր դէպքերի հանդէպ. մթթէ ուրեմն օգտակար չենք լինի այժմ հայրենիքում»։

Հոգեկան այս ալեկոծումը, անշուշտ, պատիւ է բերում հայ ուսանողութեան, որ միշտ չափազանց զգայուն է եղել դէպի ժողովրդի ցաւերը, պահանջները, որ յաճախ ասնջվել, մաղձել է հեռաւոր երկիրներում միայն նրա համար, որ իրան կէս, կիսէ ապագայի գործունէութեան, կուլ համար յօգուտ նոյն ժողովրդի։

Բայց ինչ ձևով, ինչ եղանակով ուսանողութիւնը կարող է օգտակար լինել ժողովրդին, պէտք է՞, որ նա հէնց այժմ, կիսատ և թերատ թողնելով ուսումը, վերադառնայ հայրենիք, ժողովրդի մէջ գործելու, թէ սպասէ, ուսումէ ուսումը և արդէն զինված գիտութեամբ ու ուսմամբ, մտնէ հայրենիք։

Ահա այս կէտն է, որ յուզում, ալեկոծում է ուսանողութեան միտքը և նա իրան կարօտ է զգում լսելու խորհրդատու, անկեղծ ձայն հարցը ուղիղ վճռելու համար։ Մեր խօսքը, ի հարկէ, ուսանողութեան այն մասի համար չէ, որ հետևում է նեղ—եսասիրական ընդդնեբին, որ որոնում է բացառապէս դիպլոմ՝ վաստակելու համար նրա հետ կապված իրաւունքները, այն է հասարակական և պետական կարիերիստիկ իր բաժինն ստանալու, այն այլասեռված փիլիսոփայութեան լկտի պրինցիպի հիման վրա թէ «ամեն մարդ իրաւունք ունի իր բաժին ճարպի վրա» կամ որ մի և նոյնն է «Homo homini lupus est» (մարդը մարդի համար գայլ է)։ Ոչ, մեր խօսքը այդպիսի այլասեռված ուսանողների մասին չէ. մի և նոյնն է, այդպիսիները չեն էլ մտածում ժողովրդին օգտակար լինելու, նրա օգնութեան հասնելու։ Մեր խօսքը ուղղում ենք այն ուսանողներին, որոնք սոդրված են ժողովրդական զոհաբերութեան բուռն ցանկութեամբ։

Այդպիսիներին մենք կասենք այն, ինչ որ նորերս ասաց մի ռուս լրագիր (Рус. Вѣд. № 12) ռուս ուսանողներին։

Ոչ մի կասկած չը կայ, որ կիսը բէակցիայի և յետադիմութեան մէջ վերջանալու վրա է։ Բէակցիան, որքան էլ այժմ իրան հասարէ յաղթող, բայց վերադառնալ նախկին բէժիմին անհնարին է։ Մեր երկիրը շուտով կը մտնի կայուն սահմանադրական հասարակութեան մէջ։ Աւերումը, կործանումը, բռնութիւնը շուտով կանգ կառնեն։ Զօրեղ է մեր հաւատը այդ մասին։ Շուտով կը բացվի մեր առաջ անընդհատ ստեղծագործական, էվոլիւցիոնական աշխատութեան անսահման հեռանկարը, աշխատութեան, որի նպատակը կը լինի ոչ թէ սնուցանել, պարարել առանձնաշնորհեալ գասակարգերը, այլ որի նպատակը կը լինի ամբողջ երկրի կուլտուրայի աճումը, ուսման և քաղաքացիութեան զարգացումը, միշտ ստանալու լինող օրինաւորութեան ամրացումը, և վերջապէս, տարածումը այն հասարի, թէ բարոյական նուաճումների օրութիւնը յաւիտենական է, մինչ բռնութեամբ ձեռք բերած աջողութիւնները կարճատև են։

Եւ ահա այդ ստեղծագործական աշխատութեան համար հարկաւոր են զորձողներ, աշխատաւորներ, մշակներ։ Բայց որտեղ է՞ պետութեան այն զօրքը, որտեղ են այն խիստ լուսաւոր մշակները, որոնք բանային իրանց ուսերի վրա տակուն, յամառ, ձեռնհաս, կարող աշխատութեան ծանր, բայց նախանձելի և ազնիւ աշխատութիւնը՝ օգնել բանուորին, հողագործին և ամեն մի աշխատաւորի այն անհամար ազգաների ժամանակ, որ նրա գլխին են թափվում մի կողմից նրա սեպհական ապիտութեան, իսկ միւս կողմից բիւրօկրատիայի և պլուտոկրատիայի սովորական անբարեխղճութեան պատճառով։ Դժբախտաբար, այդ զօրքը շատ սակաւաթիւ է և նրա շարքերը ոչ թէ շարունակ լցվում են, այլ ընդհակառակը, կասարկվում են։

Նոյնը և մեր հայերիս վերաբերմամբ։ Մենք խոր հաւատ ունենք, որ մեր ազգաների շրջանը կանցնի և հայ ժողովուրդը իր ներկայ ստանալի միջից դուրս կը գայ կազդուրված բարոյապէս և նրա առաջ բարձակ կը բացվի խաղաղ, ստեղծագործական, էվոլիւցիոնիստ աշխատութեան լայն դաշտը։ Բայց այդ ստեղծագործական աշխատութիւնը կրնանի դժուար է մենալու, որովհետև, մենք մի կողմից, պէտք է զարմանանք այն ազգաները, որոնք առաջ են եկել թուրքերի վայրագ յարձակումներից, միւս կողմից պէտք է կուանք այն սոսկալի ազգաները դէմ, որոնք զոյանում են այն մեծամեծ չարքերից, որ բուն է դրել մեր ժողովրդի մէջ—պատութիւնից։ Նորերս թուրքական յարձակումներին ենթարկված գաւառներից եկած մի հայ խեսելիգենտ ինձ հաղորդում էր, թէ թուրքերի հայցրած ազգաները պակաս չեն հանիմատաբար այն անպատիժ ազգաներից, որոնցից տառապում, ասնջվում է հայ գիւղական ազգաբնակութիւնը իր սոսկալի ագիտութեան, նախապաշարումների, կիրտոտութեան և անճարակութեան պատճառով։

«Դուք քարոզում էք, ողորմելիներ, ապաց ինձ այդ այդպէսն, օսցիալական գաղափարներ. գուք նոյն իսկ ամենվարական հանրապետութեան ցնորքներ էք գուրգրում, բայց մի եկէք տեսէք, ինչ սոսկալի կնիքներ, հակառողջական որպիսի ախալի պայմանների, որպիսի կեղտոտութեան, որպիսի ագիտութեան, անյատակ, անծայրագիր ագիտութեան մէջ է ապրում հայ ժողովուրդը, որի մէջ գուք կամենում էք վերցական իդէաներ տարածել։ Այդ ժողովուրդը ամեն օր հարիւրաւոր զոհեր է տալիս լոկ այն պատճառով, որ գաղափար չունի պարրական մաքրութեան, առողջապահութեան լոյսին, օգէն յարմարեցրած բնակարանի, վարակիչ հիւանդութիւնների մասին»։

Ուրեմն՝ մեր առաջ կայ հսկայական աշխատութիւն։ Եւ այդ աշխատութեան համար հարկաւոր են մշակներ, աշխատաւորներ, այն ևս բազմաթիւ։ Պէտք է դուրս գան ագիտութեան և անարդարութեան դէմ կուելու կուլտուրական մարանչողների բանակներ, բայց մարանչողները պէտք է լինեն պատրաստված մարդիկ, լայն աշխարհայեացքով, լայն գատողութեամբ, կրթված ոչ թէ ֆէլիէտոնների, այլ մարդիկ, որոնք քաղաքակրթութեան պատմական խնդիրների հետ ծանօթ լինեն հասունապէս, գիտնական, բազմակողմանի, ծանօթ լինեն երկրի իսկական պահանջների հետ, այն մշակված ձեռի հետ, որոնցով լուսաւորութիւնը պէտք կովէ ագիտութեան հետ, ճշմարտութիւնը պէտք է կովէ փարիսեցիական սուտեան հետ, իսկական աւետարանական օսցիալիզմը պէտք է կովէ կապիտալիզմի հետ։ Եւ ահա այդպիսի յատկութիւններով օժտված գործիչներ, աշխատաւորներ, մշակներ հանդիսանալու համար, պէտք է ամբարել գիտութեան առատ պաշար, պէտք է գինվել բոլոր զէնքերով, պէտք է արդէն պատրաստված լինել հիմնաւոր ուսմամբ։

Պատրաստվեցէք, պարոն ուսանողներ և միշտ, որ ժամանակ որ գաք, գուք կը գտնէք աշխատութեան լայն դաշտ։ Հունձը շատ է, բայց մշակները քիչ են։

Շանրիար

ԱՆՑԵՏԱՁԳԵԼԻ ՀԱՐՑԵՐ

Ողջոյն քեզ, ընթերցող, ազատ Ռուսաստանի—ազատ քաղաքացուն։

Ազատ ես այժմ դու քո խղճի, քո համոզմունքի համաձայն—խօսելու, քարոզելու, գործելու, կազմակերպելու։ Գործունէութեան ասպարէզը բաց է քո առաջ։ Այլ ևս չը կան «քէանից անկան պատճառները». կապանքները բացվեցին և ազատ գործունէութեան քո ծարաւ հոգին կարող ես յագեցնել առատ գործերով—ի բարօրութիւն հայրենի երկրի, հայ ժողովրդի։ Նա քեզ է սպասում, այդ ժողովուրդը, որ դու մաս հանես քո գիտութիւնից, որ դու ձեռք մեկնես, որ առաջնորդես դէպի լոյս աշխարհ. և դու պարտաւոր ես քո մտաւոր ու հոգեկան կարողութեան ամբողջ թափով ծառայել ընդհանուրի գործին։

Ով և լինես դու, ընթերցող, ինչ արհեստի և գիրքի, դու իրաւունք չունես այժմ հեռու մնալ հասարակական պարտաւորութիւններից, ինչ ձևով և ինչ չափով և արտայայտվելու լինի քո գործունէութիւն—դա կախված է քո ազատ խղճից և ազատ կամքից, քո ձգտումներից և հակումներից։ Ով և լինես դու, ընթերցող, բայց օգտակար լինել կարող ես դու միշտ—մտածիր, ինչով կարող ես ծառայել այն հասարակութեանը, որը կեանք է տուել քեզ, և դու անշուշտ մի ապրիր կը գտնես քո պարքը հասուցանելու հայրենի երկրին։

Իսկ ինձ թող ներվի եթէ ես բանութիւն գործ դնեմ այս ազատ ժամին և քո միտքը դարձնեմ հայ գիւղի վրա։ Այնտեղ են մեր գիւղերը, այնտեղ է մեր զօրութեան լուսն արմատները։

Գիւղը, հողը թող լինի մեր մտածմունքների գլխաւոր առարկան, թող լինի առանցքը, որի շուրջը պտոյտ պէտք է գործի մեր միտքը։

Գիւղը եղել է մինչև այժմ հայութեան պահարանը և այսուհետև էլ առանց գիւղի, առանց հողի մենք ապագայ չունենք։

Արդ, ինչպէս կապել գիւղացուն հողին, ինչ միջոցներով լայնացնել գիւղական հողաբաժինները—սակաւաութեան առաջ ինչ ձևով առնել, ինչպիսի կուլտուրական միջոցներով բարձրացնել գիւղատնտեսութիւնը և վերջապէս ինչպէս բարձրացնել հայ գեղջուկի մասաւոր մտերիզացիր։ Դա մեր մտածմունքների, մեր ձեռնհաս մարդկանց, մեր կրթված հասարակութեան հոգացողութեան նիւթը թող լինի։

Նորերս լրագիրներում հաղորդված էր, որ Անդրկովկասում—Թիֆլիսի և Բութայիսի նահանգներում պէտք է գիւղացիական հողային բանկեր բացվին։ Սկզբունքով, պէտք է ողջունել ի հարկէ այդ որոշումը, բայց միևնոյն ժամանակ և բոլորովին որ Անդրկովկասի միւս նահանգները—Երևանի, Գանձակի և Բաքուի նահանգները զրկված են մեծամ այդ անհրաժեշտ հիմնարկութիւններից, մինչդեռ այդպիսի միջնորդ բանկերի կարիքը պակաս չէ զգացվում և այդ վերջի նահանգներում։

Անարդարութիւն է օրինակ Երևանի նահանգը թողնել առանց գիւղացիական բանկի—երբ այդ նահանգի գիւղացիական ամենաբաւականացուցիչներն են Անդրկովկասում։ Այդ պարզ կարելի է տեսնել հետևեալ թուերից։

1897 թուին ամեն մի քառակուսի վերստի վրա ապրում էին.

Թիֆլիսի նահանգում . . .	26,2
Բութայիսի » . . .	32,4
Երևանի » . . .	33,2

Իսկ Երևանի մի քանի գաւառներում ապրմանութեան խտութիւնը դեռ 1892 թուին արտայայտվում էր հետևեալ թուերով.

Մի քառակուսի վերստի վրա ապրում էին.	
Էջմիածնի գաւառում . . .	40,9
Ալեքսանդրապոլի գաւառում.	44
Երևանի » . . .	48,6

Պարզ է, որ գիւղացիական բանկ ունենալու կարիքը մեծ է Երևանի նահանգում և այդ կարիքը գոհացնելու հարցը—անհետաձգելի։

Երբ Անդրկովկասի բոլոր նահանգներում մենք կունենանք գիւղական բանկեր, մեր սակաւաստղ նահանգների գիւղացիները հնարաւորութիւն կը ստանան հողեր ձեռք բերել և միաս, աւելի հոդաշատ նահանգներում ևս։

Ուրեմն պէտք է գիմել կառավարութեան և խնդրել անյապաղ մտցնել գիւղական հողաբաժինների հարցը Անդրկովկասի բոլոր նահանգներում։

Մեր հասարակութեան կանդուն միջնորդութիւնը կարող է յաջողեցնել այդ հանրօգուտ, կենսական նշանակութիւն ունեցող գործը։

Եթէ որ և է պատճառներով այդ հարցի լուծումը յետաձգվելու լինի, մենք կառաջարկէինք մեր հասարակութեան ուշադրութիւնը հեռանալ ելքը։ Տեղային այժմեայ բանալ մասնաւոր հողային միջնորդ բանկեր (Ипотечный банкъ)։ Այդպիսի բանկերը կը ծառայէին թէ գիւղացու շահերին, թէ կալուածատերերին կը նպաստէին ձեռնտու պայմաններով ծախել կալուածները և թէ գրամատէրերին անվտանգ տեղադրել իրանց գրամագլուխները. եթէ միայն մեր գրամատէրերը բաւականանան այն համեստ տոկոսներով, որ կարող է տալ այդպիսի մի ապահով ձեռնարկութիւն, հակառակ այն վիթխարի տոկոսներիդ որ տալիս են ամեն տեսակ պատահականութեան ենթարկվող գործերը։

Եթէ մեր հասարակութեան ջանքերը—անդրկովկասի բոլոր նահանգներում գիւղացիական հողային բանկեր մտցնելու հարցը լուծվի դրական կերպով, գործել նոյնմասին մասնաւոր բանկերի պահանջը մեր երկրում—Անվիճելի է։

Առաջարկում ենք այդ հարցերը մեր հասարակութեան լուրջ ուշադրութեանը։

Սօֆիա Դանիէլբեկեան

Մարտունի

ՄԻ ՎԱՂԱԺԱՄ ՄԱՀ

(Նամակ Երևանից, յունվարի 15-ին)

Այսօր քաղաքիս ս. Պօղոս-Պետրոս եկեղեցում հաւաքված էր զանազան ազգերից՝ հայ, ռուս, վրացի, երկսեռ անդամ բազմութիւն՝ կատարելու երախտագիտական՝ բարոյական, գաղափարական և ընկերական մի սուրբ պարտականութիւն ի յիշատակ Տօմսկի տեխնոլոգիական ինստիտուտի ուսանող Ազէքսանդր Մալխասեանցի, որի թաղումը տեղի ունեցաւ այսօր հասարակաց գերեզմանոցում։

Հանգուցեալը այն երիտասարդ ուսանողներից էր, որոնց իդէան են ժամանակի գաղափարները և առաջադէմ մտքերը և որոնց հեռանողները ներկայումս մի տագնապ թիւ են ներկայացնում։ Թէև հանգուցեալը կարճ ժամանակ եղաւ Երևանում, բայց այդ կարճ միջոցում տնդին յարգողներ վաստակեց իր կրակոտ ճառերով։ Պատարագին երգում էր թեմական զգրոցի աշակերտական խումբը, իսկ թաղման թափորին նուագում էր գիմնազիայի աշակերտներից բաղկացած նուագածու խումբը։ Դրված էին երեք պսակ—ընկերներից, արհեստաւոր դասակարգից և բարեկամներից։ Խօսեցին դամբանականներ եկեղեցում, եկեղեցու դուռնում և գերեզմանոցում հայերից, ռուսներից և վրացիներից, որոնք գրուատեցին հանգուցեալի անվեհերութիւնը կեանքի կռուի մէջ, գիտական հայեացքները, զարգասիրի պրոպագանդան, հաստատակամ և արդարութիւն պաշտպանող բնաւորութիւնը։

Երբ գլխակոր հետևում էի տխուր թափորին, ես լիշեցի մի եւրոպացի պատմագրի հետևեալ խօսքերը. «Երիտասարդներ, ձեզանից իւրաքանչիւրը թող հարց դնի իրան թէ ինչ արեցի ես իմ կրթութեան համար։ Եւ երբ այդ ճանապարհով առաջ կերթանք, դուք հարցրեք ձեզ ինչ արեցի ես իմ հայրենիքի համար։ Եւ միայն մարդ այն դէպքումն է զգում անանձնութիւնը, երբ որ ինքը մի բան արած է լինում մարդկութեան համար։ Եւ այդ մի բանը արած լինելուց յետոյ, երբ մօտենում է իր կեանքի վախճանին, նա զգում է, որ իրաւունք ունի ասելու, այո, ես արեցի բոլորը, ինչ որ կարող էի անել։ Յիրաւի ազնիւ մի մարդ էր, մի զգայուն սիրտ էր հանդուցեալը, որ երկար տարիներ հայրենիքի տենչով տոչորված սլացաւ դէպի յաւիտենական օթևանը, ասելով. այո, արեցի այնքան, որքան ներում էին ինձ մարդկային տկար մարմինս»։

Նամակս կնքելիս լսեցի, որ մեր վաճառականները ժողովվելով քաղաքային տան մէջ, որոշել են բոլորը պահպանելու համար վարձել 48 հայ և 48 թուրք գիշերապահներ և այդ առիթով դիմելով գեներալ-նահանգապետին՝ ստանում են դրանց զինելու իրաւունք։ Բայց գուցէ այդպիսով երկու ժողովուրդ զինում են իրար դէմ և մի մի պատերազմական բանակ են կազմում։

Գ. Զարգարեանց

ՄԱՔԻՍԻ ԳՕՐԿՈՒ ՄԻ ՆԱՄԱԿԸ

Տաղանդաւոր ռուս գրողը՝ Ժորեսի օրգանին, «L'Humanité»-ին ուղղել է մի նամակ, ուր երգում է յոսի երգը, ուտիստ՝ ազատ ազատ Ռուսաստանի արշալոյսի անխուսափելի յաղթանակը, որ պիտի ծագէ նոյն իսկ այժմեան ըէակցիայի ծանր ամպերի ետևից։ Առաջ ենք բերում մի քանի մասեր այդ նամակից։

«Պրոլետարիատը յաղթված է։ Յեղափոխութիւնը ջախջախված է։» բացագանչում է հրճուանքով մեր յեղափոխական մամուլը։ Զարմանալի է այդ ուրախութիւնը։ Պրոլետարիատը պարտված չէ, որքան որ էլ նա ունեցաւ։ Յեղափոխութիւնը զօրեղացել է նոր յոյսերով, նրա շրջանակները հսկայական չափերով մեծացել են այս վերջին օրերում։ Յեղափոխութիւնը բարոյական մեծ յաղթանակ է տարել բուրժուազիայի դեմ, որը այժմ տեսաւ շատ յստակ կերպով, թէ ովքեր են Ռուսաստանում անիշխանութեան հեղինակները ու պաշտպանները։ Նա ճանաչեց նրանց, որոնց հարկաւոր է անիշխանութիւնը, և ընդհակառակը, համոզվեց, թէ ովքեր և ինչ նրա պատասխանով հանում են այդ անիշխանութիւնը դէմ։ Բուրժուազիան տեսաւ, որ պրոլետարիատը պաշտպանել ազատութիւնը, որ անհրաժեշտ է իր՝ բուրժուազիայի համար, ազատութիւնը, որ գինց ժողովրդը իր արիւնով և որը կատարելագործում է նրա ձեռքից խլել։

Ռուս կառավարութիւնը, հնորհիւ այն բանի, որ չէ ըմբռնում իրերի իսկական գրութիւնը, տարել է մի յաղթանակ à la Պիրրիս (այսինքն ամբոխ թանգ, որ դրա նման մի յաղթանակ էլ և նոս կորած է)։ Նա մտել է դէպի Ֆաս, իր անկարգութիւնի և իր անանձնութեամբ, չափազանց տարերը, և, ես հաւատացած եմ, որ նա էլ աւելի հեռու պիտի մտնէ նրանց, այդ ուղղութեամբ։

Ռուսական պրոլետարիատը գնում է կամաց կամաց դէպի վճռական յաղթանակը, որովհետև նա մենակ գասակարգն է, որ զօրեղ է—բարոյապէս, գիտակից է իր էութեան մասին և հաւատում է իր ապագային, Ռուսաստանում։

Ես ասում եմ միայն ճշմարտութիւնը, և այդ ճշմարտութիւնը պիտի հաստատվի, ժամանակի ընթացքում պատմական կրկնման, կիսէ պատմական ձեռքը արտիշտ ձեռք է և արդարութիւնը կազմում է նրա կրօնը»։

Աւելի, պատմութիւնը գնում է նոյն անողոք, եղերական ճանապարհով։ Նրա արձնում գասակերպ չէ խրատվում մարդկութիւնը։ Մինչ աշխարհում կայ մի ոյժ, որ կարող լինի կանգնեցնել էվոլիւցիայի սիրական ընթացքը...

ԳԱՆԶԱԿԻ ԳԵՆԵՐԱԼ-ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ ՏԷՐ-ՎԱԾ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ

Յայտարարութիւն!

Պատիւ ունեմ հաղորդելու Ձերդ Գերազանցութեան, որ նոյեմբեր ամսոյ 16-ին ես ճանապարհվեցի դէպի Գեռաբէդ ընդունելու ուղեւորը։ Տեղ հասնելով նոյեմբերի 17-ին, Գեռաբէդի ուղեւորի կառավարիչ Ալիեվը յայտնեց ինձ, որ Լարաքենդի ընակիչները Գեռաբէդում հրդեհեցին անառաջապահ Աբբաս Գուլիեվին պատկանող 60 ապլ խոտը։ Ամսի 18-ին գնալով Լարաքենդ, ես կալանաւորեցի հրդեհողներին՝ Մօվսում Բերբալայ Ալլահվերդի օղլուն և Կապում Պաղրդ ջլլուն և նոյն օրն էլ բերի Գեռաբէդ ու քանտարկեցի։ Իսկ 18-ին երեկոյեան Զարդախլուից հաղորդեցին հեռախօսով, որ գիւղը շրջապատված է թուրքերից և կոտորած է սպասվում։ Եւ որովհետև ես զրաված էի հրդեհի գործը քննելով, ուստի խնդրեցի Ալիեվին գնալ Զարդախլու օգնութեան։ Ալիեվը խոստացաւ գնալ։ Երեկոյեան ժամի 9-ին երկրորդ անգամ տեղեկութիւն ստացայ, որ հարկաւոր է շուտափոյթ օգնութիւն հասցնել Զարդախլուեցիներին։ Իշնելով ներքև ու մտնելով բուֆետը, ես տեսայ այնտեղ Ալիեվին, իմ հարցին թէ ինչու չէ գնացել, նա պատասխանեց, որ գնալ չարժէ, որովհետև աւելորդ նեղութիւն է։ Այն ժամանակ ես, հեռս վերցնելով հինգ պահակներ, անմիջապէս գնացի Զարդախլու նոյեմբերի 19-ին գիշերը, ուր ինձ հաղորդեցին, որ Զարդի գիւղը ես և որ թուրքերը գնում են դէպի Բաղաբենդ։ Միևնոյն օրը ես 8 պահակներով գնացի Ֆրէգեօվկա գիւղը, որտեղ ամբողջ ռուս ազգաբնակութիւնը սարսափահար եղած խմբվել էր եկեղեցու մէջ։ Ֆրէգեօվկից ես ճանապարհեցի դէպի Բաղաբենդ, որը բոլոր կողմից շրջապատված էր թուրք հրսասկներով և մատնված նրանց կողոպուտին ու ջարդին։ Գիշերելով Ֆրէգեօվկա գիւղում, յաջորդ օրը ես կանանց ուղարկեցի Սլավանսկա գիւղը, իսկ տղամարդանց հրամայեցի պահպանել գիւղը, ուր ես ինքս էլ մնացի։ Երբ ամսոյ 21-ին նկատեցի, որ թուրքերը մօտենում են Ֆրէգեօվկա գիւղին, ես պահակներիս հետ միասին գնացի Սլավանկա գիւղը. պէտք է աւելացնեմ, որ 20-ին, գիշերը, Բաղաբենդ գիւղի քահանայ տէր Մեսրովպ Սահակեանեանցը յայտնեց, որ նոյեմբերի 19-ին Բէյսարի-Ախալլի, Տաշալի և Դուզալի գիւղերի թուրքերը յարձակվեցին Բաղաբենդի վրա, սպանեցին և քշեցին-տարան ամբողջ նախիրը։ Նոյն օրը 21-ի երեկոյեան եկաւ Սլավանկա Ֆրէգեօվկայի քահանան և յայտնեց, որ թուրքերը խոստացան սուսերին ձեռք չը տալ և ճանապարհվում են դէպի Գեռաբէդ։ Եկա մտիից յետոյ վաղ է վաղ եկան 25 հոգի հայեր և խնդրեցին պաշտպանել իրանց, որովհետև Սլավանկան արդէն պաշարված է։ Հայերին ես թաղցրի նկատման։ Իսկոյն և էլ երեկոյեան ձիաւորներ, բաղկացած 800 թուրքերից։ Ինձ մօտ վազեցին գուլաթարները նոյնպէս և խնդրեցին երակ չը բանալ նրանց դէմ, որ մինչև հակառակ դէպքում գիւղը քարուքանդ կանեն։ Միևնոյն ժամանակ գուլաթարների ասնուտէրը խնդրից անից դուրս չը գար։ Մինչ այդ թուրքերը թալանելով երկու խանութ, Օսիպովի և Մնացականովի, կողոպտած ամբողջ ապրանքը դարսեցին նրանց ֆուրգոնների մէջ ու տարան։ Թուրքերը գնալիս նախազգուշացրին գուլաթարներին, որ 22-ին նրանք պէտք է ասեն հայերի խանութները Գեռաբէդում։ 22-ին ես գնացի, Գեռաբէդ, օրտոր հայերի բոլոր խանութները փակված էին, իսկ ժողովուրդը հաւաքված հայոց եկեղեցու մօտ սարսափով սպասում էր թուրքերի յարձակման, իսկ վերջինները մեծ խմբերով-մօտ 500 հոգի կանգնած էին շտկայում։ Երեկոյեան ժամի $5^1/_2$-ին ես Միխիթեանի համայնքի տանուտէրի հետ միասին գնացի Սլավանկա գիւղը. պէտք է աւելացնեմ, որ 20-ին, գիշերը, Բաղաբենդ գիւղի քահանայ տէր Մեսրովպ Սահակեանեանցը յայտնեց, որ նոյեմբերի 19-ին Բէյսարի-Ախալլի, Տաշալի և Դուզալի գիւղերի թուրքերը յարձակվեցին Բաղաբենդի վրա, սպանեցին և քշեցին-տարան ամբողջ նախիրը։ Նոյն օրը 21-ի երեկոյեան եկաւ Սլավանկա Ֆրէգեօվկայի քահանան և յայտնեց, որ թուրքերը խոստացան սուսերին ձեռք չը տալ և ճանապարհվում են դէպի Գեռաբէդ։ Եկա մտիից յետոյ վաղ է վաղ եկան 25 հոգի հայեր և խնդրեցին պաշտպանել իրանց, որովհետև Սլավանկան արդէն պաշարված է։ Հայերին ես թաղցրի նկատման։ Իսկոյն և էլ երեկոյեան ձիաւորներ, բաղկացած 800 թուրքերից։ Ինձ մօտ վազեցին գուլաթարները նոյնպէս և խնդրեցին երակ չը բանալ նրանց դէմ, որ մինչև հակառակ դէպքում գիւղը քարուքանդ կանեն։ Միևնոյն ժամանակ գուլաթարների ասնուտէրը խնդրից անից դուրս չը գար։ Մինչ այդ թուրքերը թալանելով երկու խանութ, Օսիպովի և Մնացականովի, կողոպտած ամբողջ ապրանքը դարսեցին նրանց ֆուրգոնների մէջ ու տարան։ Թուրքերը գնալիս նախազգուշացրին գուլաթարներին, որ 22-ին նրանք պէտք է ասեն հայերի խանութները Գեռաբէդում։ 22-ին ես գնացի, Գեռաբէդ, օրտոր հայերի բոլոր խանութները փակված էին, իսկ ժողովուրդը հաւաքված հայոց եկեղեցու մօտ սարսափով սպասում էր թուրքերի յարձակման, իսկ վերջինները մեծ խմբերով-մօտ 500 հոգի կանգնած էին շտկայում։ Երեկոյեան ժամի $5^1/_2$-ին ես Միխիթեանի համայնքի տանուտէրի հետ միասին գնացի Սլավանկա գիւղը. պէտք է աւելացնեմ, որ նա ինձ յանձնված ոչխարակի պահակները հաղորդեցին, որ թուրքերը նրանցից խլում են փամփուշտները, իսկ նրանցից մէկը՝ թուրք Աստանը յայտնեց, որ պրիստաւ Ալիեվը նրա վրա ուղղեց, հրամայելով իր պահակին խլել նրանից հրացանը այն պատճառով, որ Աստանը չէ միանում յանցաւոր թուրքերին, բայց քիչ ժամանակից յետոյ աւագ պահակ Բիլիկովը յետ առաւ նորից հրացանը և յանձնեց Աստանին։ Ճամբում պատիւ ունեմ յայտնելու, որ, ինչպէս ես կապարկապէս համոզվեցի, պրիստաւ Ալիեվը իր պահակներով և Միխիթիչկի հասարակութեան տանուտէր Մահմէդի հետ միասին ամենագործունեայ մասնակցութիւն ունէին այդ բոլոր խայտառակութիւնների մէջ։ Մինչև անգամ յիշեալ տանուտէրը համարձակվեց կանգնեցնել ինձ Սլավանկա գիւղում, երբ խնդացաւ որ ես Գանձակ եմ գալիս, և խլեց ինձնից Բրաունինգ ատրճանակը, որ պահանջում է մի յոյնի։ Աւելացնում եմ նոյնպէս, որ երբ թուրքերը խմացան, որ ես արդէն պրիստաւի պաշտօնավարութիւնս սկսել եմ, ջարդ ու փչոր արին իմ գրասենեակը և արձակեցին բոլոր կալանաւորվածներին։ Երբ այդ մասին ես հաղորդեցի պրիստա

զաքային տան շինության մէջ մի Բարեգործական Ընկերութիւն հիմնելու նպատակով։ Ժողովը բաց արեց Բագուի քաղաքագլուխ Գիւմրի բէկ Սաֆար-Ալիևի մի քանի խօսքով ցոյց տուեց Բարեգործական Ընկերութեան անհրաժեշտութիւնը և առաջարկեց, որ ժողովը իր համար ընտրէ մի նախագահ և մի քարտուղար։ Ընտրեցին առաջին պաշտօնի համար Զէյնալ-Աբդին Թաղիևին և երկրորդի համար Անմէդ-բէկ Ադայեվին։ Խօսք առին Հաջի Միրզա Աբու Թիւրաբ, Ադամիր Մօհամէդ Բէյրմ, ընդգծելու Բարեգործական Ընկերութեան կարիքը և ազգի ու գոյութիւն մասուցին Թաղաւր-Կայաբին, Կայսրաշինարին, Գանձասարանդին և ամբողջ Կայսերական ընտանիքին, ինչպէս և Կովկասի Փոխարքային, փաք ու պատիւ մատուցին նոյնպէս «Հասարակութեան, քաղաքի և ազգի» ամէն մի բարի գործին դլուխ ու պաշտպան կանգնող հաջի Զէյնալ-Աբդին Թաղիևին։

Այս վերջինը՝ շնորհակալ լինելով յայտնեց, որ Բարեգործական Ընկերութիւնն պանդնը երեսուն տարի առաջ է զգացել և միշտ աշխատել է նրա բարաբարութեան համար։ Այժմ նա ուրախ է, որ վերջապէս իր վաղուցվայ ցանկութիւնը իրականանում է և մանկական տների համար բացվում է «փրկութեան ճանապարհը»։

Բէքրաթայ-Իսրաֆիլ Հաջիևի պարաք համարից յայտնել հետևեալը։ «Յարգելի հաջի, դուք առաջին անդամը չէ, որ լաց եք վնասում ազգի համար, դուք ձեր կեանքը նուիրել եք ազգին. շատ լաւութիւններ, շատ բարերարութիւններ եք արել։ մենք հասարակութիւնս՝ ձեզանից շնորհակալ ու շնորհապարտ, կը խնդրենք բարձրանս Աստուծուց, որ ձեր կեանքը մեզ համար շատ չը տևնէ.»։

Յետոյ խօսեցին ուսուցիչներ և հոգևորականներ, դասնալով Բարեգործական և Թաղական շարքը։

Նախագահը այնուհետև հրաւիրեց ժողովը ընտրել 7 հոգի, Բարեգործական Ընկերութեան համար մի նախագահ, մի օգնական, մի գանձապահ, երեք անդամ և մի քարտուղար։

Ժողովը միաձայն, Ընկերութեան նախագահ ընտրեց Թաղիևին և Հաջի Մոսոսֆի Բաւուլովին՝ գանձապահ։ Միւս պաշտօնների համար, Ընկերութեան կանոնագրի հոդածային ձևակերպեց քուէարկութեան։ Բայց մի փոքրիկ տարաձայնութիւն ծագեց։ Ոմանք այն միտքը յայտնեցին, որ պէտք է յետաձգել ընտրութիւնը, իսկ ուրիշներ՝ անմիջապէս կատարել պահանջեցին։ Առաջին կարծիքից պրոկերը Թաղին ժողովը և հետևապէս ժողովին ներկայ էին եղել ընդամենը 203 հոգի։ Ժողովականների մի մասի հեռանալուց յետոյ մնացել էին 136 հոգի։ Սրանք Ընկերութեան ի նպաստ փող վճարելուց և անդամ դառնալուց յետոյ, սկսեցին ընտրութիւններին։

Բացվեց նորից հաւերի շարքը։ Միրզա Մօհամէդ Հիւսէյին Հաջիևի ուղղվելով հասարակութեան ասաց, որ Բարեգործական Ընկերութեան առաջին օգուտը այն պիտի լինի, որ նա պիտի ծառայէ իրան մի դպրոց, մի կրթական ժողովրդի համար։ Մինչև այժմ բոլոր գործերը յանձնում էին մի քանի անձերի կարգադրութեան և իրանք յետ էին քաշվում։ Մինչդեռ, սրանից յետոյ նրանց առաջ պիտի դրվեն հասարակական շատ գործեր։ Այս ուրեմն ինչ պէտք է անեն, եթէ այդ մի քանի մարդիկը իրանց մէջ չը լինեն, շուռտած, շշկված պիտի մնան։ Դրա համար հարկաւոր է, որ հասարակութիւնը սկսէ իր գործերը իր ձեռքով կարգադրել, հարկաւոր է, որ նա ասանց ոչ օրից օգնչից ազդվելու ընտրութիւններ կատարէ։

Սա՝ կոչն է դէպի վարակութիւն, դէպի ինքնանճանաչ գործունէութիւն։ Նրան յաջողվում է օրօրը ուռացիկ ու քնեցնող գաղափարների անունով։ Եւ այդ օրօրը կարդում է Իսրաֆիլ Հաջիևի։ «Սա մի ասատաձանաղ գործ է, բացականչում է քաղաքային դումայի ծանօթ ձայնատուը, դրա համար էլ, դուք ընտրեցէք նկատի ունենալով Աստուծոյ և հասարակութեան շահերը»։

Սկսվում է ընտրութիւնը։ Նախ բաժանվում են թղթեր, որպէս զի ժողովականները գրաւոր առաջարկեն այն անձերին, որոնց պէտք է քուէատուութիւն տալ քուարեանութեան ներթակել։ Այդ առաջին փորձը տալիս է հետևեալ բնորոշ արդիւնքը։ 1) Բէրբէլայ Իսրաֆիլ Հաջիևի, փոխ-նախագահ, 125 ձայն։ 2) Անմէդ բէկ Ադայեվ, վարչութեան անդամ և քարտուղար, 87 ձայն։ 3) Իսմայիլ բէկ Սաֆար Ալիևի՝ 83 ձայն։ 4) Միրզա Մօհամէդ Հիւսէյին Հաջինսկի՝ 78 ձայն։ 5) Հաջի Միրզա Աբու Թիւրաբ՝ 53 ձայն։ 6) Ախմէդ Մօլլա Ալի Էքբէր՝ 29 ձայն։ 7) Սատրլաբ Անէդով՝ 22 ձայն։ 8) Հաջի Անան Ազուբով՝ 17 ձայն։ 9) Ալի Մարդան բէկ Թօփչիբաշով՝ 13 ձայն։ 10) Աղա Ալի Էքբէր Դաղաշով՝ 12 ձայն։ 11) Ազարաբա Կոլիով՝ 7 ձայն։ 12 Հիւսէյին աղա Հիւսէյնով՝ 1 ձայն։ 13) Միրզա Սատրլաբով՝ 1 ձայն։

Զէյնալ-Աբդին Թաղիևի և Իսրաֆիլ Հաջիևի առաջարկութեան համեմատ ժողովականները մեծ գոհունակութեամբ պատուի տպում են ընտրում Ախմէդ Միրզա Աբու Թիւրաբին, Ադամիր Մօհամէդ Բէրմէին և Ախմէդ Մօլլա Ալի Էքբէրին։

Այնուհետև Միրզա Մօհամէդ Հիւսէյին Հաջինսկի՝ շնորհակալութիւն յայտնեց ժողովականներին, ասաց որ ինքը միշտ պատրաստ է հասարակութեան ծառայելու, բայց նա չէ ուզում իր քուէատուութիւնը գնել ընտրութեան համար։ Ժողովը ցանկութիւն յայտնեց, խնդրեց, որ նա քուէարկվի, բայց նա բացարձակ մերժեց և գարձեալ կրկնեց, որ պատրաստ է հասարակութեան օգնել, ծառայութիւններ մատուցանել ուրիշ կերպով։ Դրանից յետոյ Թաղիևի առաջարկութեամբ դրվեցին 5 քուէատուփ. Բէրբէլայ Իսրաֆիլ Հաջիևինը՝ Իբրև փոխ-նախագահ, Անմէդ բէկ Ադայեվինը՝ Իբրև անդամ և քարտուղար ընկերութեան, իսկ Իսմայիլ բէկ Սաֆար-Ալիևի, Սատրլաբ Անմէդովի, Ալի Մարդան բէկ Թօփչիբաշիվի տուփերը՝ Իբրև վարչութեան անդամ։ Քուէարկութիւնից յետոյ. 1) Հաջիևի տացաւ 120 սպիտակ, 1 սև քուէ. 2) Ադայեվ՝ 115 սպիտակ վեց սև. 3) Անմէդով՝ 93 սպիտակ, 28 սև. 4) Սաֆար Ալիևի՝ 111 սպիտակ, 21 սև. 5) Թօփչիբաշիվ՝ 66 սպիտակ, 55 սև։

Երբ ընտրութեան գործը վերջացաւ, ժողովականները հարցանդեցին Թաղիևին, թէ ինչու համար Ադայեվը թողել էր «Հայաթ»-ը. ասացին, որ նրանք չեն թոյլ տայ յիշեալի հեռանալը։ Յամենայն դէպս հեռացման պատճառները կուզէին իմանալ։ Թաղիևը ժողովից խնդրեց, որ մի քանի հոգի ընտրվի և ուղարկվի իր մօտ, որպէսզի այդ գործը քննեն և պարզեն, թէ ով է մեղաւորը։ Հետևեալ օրը դարձեալ ժողով է գումարվում դումայի դահլիճում, ընտրվում են մի քանի հոգի և գնում են այդ վատուկ և խորհրդաւոր գործը քննելու։

Թէ ինչ է պարզում քննութիւնը, այդ մեզ՝ հասարակ մահկանացուներիս անյայտ է, ուրախանում այդ մասին թուրք մամուլը սիրինքսի լռութիւն է պահպանում,

Ե. Զաւէն

ՄԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆ

—

«Объединеніе» լրագրի մէջ տպված է Յարսկեմ. Սելօում նոյեմբերի 23-ին ուս ժողովրդի դաշնակցութեան կողմից Թագաւոր Կայսրին ներկայացած յանձնաժողովի լիակատար հաշիւը։ Այդ յանձնաժողովը բաղկացած էր 23 անձերից գաղիկցութեան նախագահ Դուբրօվինի նախագահութեամբ։ Բերում ենք հաշուի գլխաւոր մասնիմները։ Նախագահ Դուբրօվին կարդաց Թագաւորին ուղերձ, որը բեռլոց յետոյ Թագաւորը խնդրեց Արքայական շնորհաւորութիւն յայտնել ուղերձը տարարդրութիւն։ Ապա նախագահը մատուցեց Թագաւորին դաշնակցութեան երկու նշան և խնդրեց Նորին Մեծութիւնից ընդունել այդ նշանները Իր և Թագաժառանգ Ցեսարեվիչի համար։—«Լաւ,—պատասխանեց Թագաւորը.—շնորհակալ եմ ձեզանից»։ Հետևեալ Մարիսվի, ուղերձը լսելուց յետոյ, Թագաւորն ասաց. «Մոսկվայի Կրեմլում Իմ վրա գրված իշխանութեան լուծը ես ինքս կը տանեմ և ես հաւատացած եմ, որ ուս ժողովուրդը կօգնէ Իմ. Իշխանութեան համար ես հոշիս կը տամ Աստուծու առաջ»։ Ապա Մարիսվի ասած ճառից յետոյ Թագաւորն ասաց. «Շնորհակալ եմ ձեր անկեղծ զգացմունքների համար։ Ես հաւատում եմ ուս ժողովրդին»։ Տրիշառնին ուղերձ կարդաց դաշնակցութեան Եարօսլավի բաժանմունքից և ապա դիմից Թագաւորին ճառով։ Թագաւոր, պատասխանեց. «Շնորհակալութիւն յայտնեցէք ուս ժողովրդի դաշնակցութեան յարգ բոլոր ուս մարդկանց։ Շուտով, կը փայլէ արդարութեան արեգակը Ռուս երկրի վրա, և այն ժամանակ բոլոր կասկածները կանհետանան։ Յայտնեցէք Իմ շնորհակալութիւնը Եարօսլաւի և Վոլգայի գիւղացիներին»։ Ապա Բուլգէլ ճառ արտասանեց, որը ուարտեց հետևեալ խօսքով. «Մի հաւատաք, Թագաւոր, այն բանին, թէ ումն են առաջ տանում մասոնները և թէ ով է յանգում միայն այլազգիների վրա։ Եթէ ուս ժողովուրդը, իր երեսը խաչակնքում է, աղօթք է անում իր Ինքնակալ Թագաւորի համար, հաւատացէք, որ այդ աղօթքը աւելի թանգ է քան արտասահմանեան լրագիրների և բանկիրների զոմատանքները։ Մենք շատ ենք։ Միլիոնաւոր ուս գիւղացիներ խաչակնքում են իրանց նոյնպէս, որպէս այժմ մենք ենք խաչակնքում մեզ։ Յենվելէք ուս մարդկանց վրա, և դժոխքի ոչ մի դռներ չեն յաղթահարի ուս ժողովրդով շրջապատված ուս Թագաւորին»։ Թագաւորը, շնորհակալութիւն անելով, բարեհաճեց ասել. «Այո, ես հաւատում եմ, որ ձեր օգնութեամբ Ինձ և ուս ժողովրդին կայզովի յաղթել Ռուսասանի թշնամիներին»։ Բարանով ի մէջի այլոց ասեց. «Հրեաները անպայման չեն ընդունվում որպէս անդամներ դաշնակցութեան մէջ, թէկուզ դաւանելիս լինեն պրաւօսլաւի կրօնը։ Սրանով մենք կամեցանք մեր կառարեալ անվստահութիւնը յայտնել նրանց։ Մենք հաստատ համոզված ենք այն բանում, որ ներկայ շրջիկը Սուրբ Ռուսասանում նրանց ձեռքի գործն է։ Յանկանալով բարօրութիւն հայրենիքիս, համարձակվում եմ ամենասրտանց խնդրել, աղաչել Քեզ, Մեծ Թագաւոր, հրամայիր, որ նրանց հաւատար իրաւունքներ չը տան մեզ հետ, այլապէս նրանք չիշեն մեզ վրա»։ Թագաւորը պատասխանեց. «Ես կը մտածեմ»։ Ապա Թագաւորը լսեց բանաւոր կուզմինին և պատասխանեց. «Մի բացէք ուս մարդիկ, ես յոյս ունեմ ձեզ վրա»։ Բօրիսովի ճառից յետոյ Թագաւորն ասեց. «Շնորհակալ եմ. յայտնեցէք Իմ շնորհակալութիւնը բոլոր հասանեաններին»։ Ապա Թագաւորը հարցրեց. «Ո՞վ էք դուք»։ Բօրիսովը պատասխանեց, թէ նա կառքեր և սայլեր պահող է, Բեսարանի նահանգի գիւղացի, և որ սայլեր պահողները ամեն ջանք գործ դրին հեռու պահելու կառապաններին գործադուլից։ Դրան Թագաւորը հարցրեց. «Այդուվէ՞ց»։ Բօրիսով պատասխանեց. «Այդուվէ՞ց»։ Նրա վրա Նորին Մեծութիւնը կրկին ասեց. «Յայտնեցէք կառապաններին իմ շնորհակալութիւնը. միացէք և աշխատեցէք»։

(Русск. Вѣд.)

ԴՈՒՐՉԵԱԼ ԿԵՆՏՐՕՆԱՅՄԱՆ ԵՒ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԽՆԴԻՐԸ

(Իմ պատասխանը պ. Խաժակին)

I

«Մշակի» այս տարվայ №№ 7, 9, 13 պ. Խաժակը «կենտրոնացում և ֆեդերացիա» վերնագրով մի յօդուած է զետեղել, որով նա պատասխանում է մեր այն հերքումներին, որ գրել էինք «Մուրճ» ամսագրի № 11—12-ում (1905 թ.)—«Քաղաքական կենտրոնացման և ֆեդերացիայի խնդիրը» վերնագրով,—ընդդէմ պ. Խաժակի յօդուածների («Մշակ» №№ 227, 228 և 230, 1905 թ.)։

Մենք յանձնարարում ենք այն ընթերցողներին, որոնք ասանձնապէս հետաքրքրվում այս խնդրով և որոնց համար արժէք ունի այդ առիթ տվղելիք բանակռիվը, նախ կարդալ պ. Խաժակի անցեալ տարվայ գրած յօդուածը, ապա մեր հերքումները նրա դէմ, «Մուրճի» մէջ, և այնուհետև հետևել ներկայ բանակռիվին։ Յանձնարարում ենք մանաւանդ այն պատճառով, որովհետև ընթերցողը չէ կարող պ. Խաժակի ներկայ գրածներից նոյն իսկ մօտաւոր գաղափար կազմել մեր հերքումների մասին, որոնց հիմնական միտքը չէ ըմբռնել պ. Խաժակը, մի քանի կէտեր ուղղակի չէ հակադրել, իսկ մի քանիսն էլ ապատեղել է։

Ամենից առաջ նկատենք, որ «Մուրճում» գրած մեր յօդուածը ամբողջապէս չէ ապառում խնդիրը։ Մենք այդ յօդուածում բացատրել ենք պ. Խաժակի յօդուածով, ինչպէս նոյնը Նէյատով։ Ասել ենք ամենայն դէպս, որ «Մշակ» № 9) չեն ապառում պ. Խաժակին պատասխանատուութիւնից և ոչ էլ ծգտվում են նրա պատասխանատուութիւնը, մակերեսային հակադրութիւնը։

Ինչպէս է հակադրել խնդիրը մեր մեծապատիւ քննադատը։

III

Նախ մի փոքրիկ տեսական բացատրութիւն։ Ամեն մի հասարակական երևոյթ՝ դրական թէ բացասական, ամեն մի քաղաքական ինստիտուցիա (հիմնարկութիւն), սոցիալ-տնտեսական ֆակտոր և այլն ուսումնասիրելու և նրանց էութիւնը, գոյութեան իմաստը հասկանալու համար, անկարելի է հատիկ-հատիկ վերցնել դրանցից իւրաքանչիւրը և մեռաֆիզիքական մեթոդով քննութեան օբյեկտ դարձնել նրան, որպէս այդպիսին, և ընդունել կամ մերժել մէկի թէ միւսի կարևորութիւնը։ Ամենից առաջ անհրաժեշտ է վերածել այդ բոլորը որոշ կլասիֆիկացիայի, կազմել գաղափարական կաթեգորիաներ, մանրամասնին վերլուծութեամբ հետազօտել նրանց ծագման պրոցեսները,—արտել վերջինները տարբեր համակարգերի օրգանական նմանութիւնները, անմիջական թէ միջնորդական շաղկապումները, ապա ճանաչել և ըմբռնել այն ընդհանուր հասարակական կարգերի ընդհանուր սիստեմը, անրապատող սիստեմը, իշխող ոգեմիջը, որոնց ծոցում ծագում, սնվում ու պատուաստում են բոլոր մասնակի երևոյթները։ Ընդհանուր սիստեմի, անրապատող կարգերի հնարաւոր ներգործութեան մէջ պէտք է որոնել բոլոր երևոյթների պատճառները։ Ամեն մի երևոյթի փոխադարձութիւն պայմանաւորված է նրա պատճառի վերացումով, իսկ վերջինս պայմանաւորված է անրապատող սիստեմի փոփոխութեամբ, և իրաւ այնքան, որքան այդ և նմանօրինակ պատճառների վերացումն է պահանջում, ուրիշ խօսքով՝ որքան այդ համապատասխան է ժամանակի սրամտական անհրաժեշտութեան։

Որպէս զի մենք կարողանանք հիմնովին հասկանալ այս կամ այն երևոյթի, ինստիտուցիայի և ֆակտորի «ինչ» լինելը, մենք պիտի ըմբռնենք նաև նրա «ինչու» լինելը։ «Ինչ լինելովը» մենք ընդունում ենք երևոյթի, ինստիտուցիայի և ֆակտորի էութիւնը, իսկ «ինչ լինելովը» մենք կէտ առ կէտ ընդունում ենք նրանց գոյութեան իմաստը, նրանց նպատակը։

Սակայն որպէս զի հնարաւոր լինի մեզ ճանաչել մի երևոյթի, ինստիտուցիայի և ֆակտորի էութիւնը, անհրաժեշտ է, որ մենք քննենք ու պարզենք մեզ նրանց որակը, նրանց յատկանշական գծերը, նրանց գոյութեան կրիտերիումը։

Սա է երևոյթների և երևոյթների հատաղօտութեան ու հասկացողութեան մատերիալիստական-դիալեկտիկական մեթոդը իր գիտակից սկզբունքներով։ Եւ այս տեսական բացատրութիւնը կարևոր է մեզ համար, որպէս զի ընթերցողին յայտնի կօնկրէտ օրինակը լուսաբանված լինի տեսական հայեցակէտով, որպէս զի, պարզ ասենք, աւելի պրակտիկ երևայ այդպէս անուանված «մարքսիսմ» պ. Խաժակի դատողութեան մեխանիքական, բանազբօսիկ լինելը։

Անցնենք այժմ բիւրոկրատիայի որպէս մի պետական ինստիտուցիայի էութեան։

Բ. Իշխանեան

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Զարջոյ, յունվարի 10-ին

Թոյլ տուէք խնդրեմ «Մշակի» մէջոցով յայտնել հետևեալը։

Անցեալ գիշերները ամառում տեղումս սաբզված էր վիճակաքաղ տեղիս հայ տիկնանց նուիրած ձեռագործներով, որից դուռ արգինք է մնացել 137 ր. 60 կ։ Այդ հանիւս գումարով սկիզբն է դրվելու Զարջոյի հայ հասարակական գրադարանի։

Այն բոլոր տիկիններին և պարոններին, որոնք ամեն կերպ նպաստեցին յիշեալ վիճակաքաղին՝ յայտնում եմ իմ սրտագին շնորհակալութիւնը։

Կատարինէ Աբրահամեանց

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐ

—

Երևան 21 յուն. 1 ժամ ցերեկվայ.

Գեներալ Գօլոշչապօվը հետևեալ հրամանն է արձակել Երևան-Շուշի խճուղու վերաբերութեամբ։ Ամեն մի կարգադրութիւն խիստ պատժի կենթարկվի։ Աւերումի կենթարկվեն այն գիւղերը, որոնց շրջանում տեղի կունենան յանցագործութիւններ։

Շահնազարեան

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Վեհափառ կաթուղիկոսի էջմիածին գալը չը կայացաւ երեկ յունվարի 21-ին այն պատճառով, որ տեղեկութիւն ստացվեց թէ կարսի երեսփոխանը գիշը փչացել է։ Այդ մասին Թիֆլիսի ոստիկանապետը զեկուցել էր առաջնորդարան վաղօրօք։ Վեհափառը կը մնայ Թիֆլիսում մի քանի օր էլ, մինչև որ գիշը բոլորովին կարգի կընկնի և երթևեկութիւնը կը կանոնաւորվի։

—

Այսօր, ժամը 11-ին, առաջնորդարանում կայանալու է ընտրութիւնը այն ներկայացուցիչների, որոնք պէտք է ընտրվեն Թիֆլիսի հայ ազգաբնակութեան կողմից հայ-թուրքական խարդախութեան համար։ Այս առիթով պէտք է ուղղենք մի սխալ, որ սպրտել է «Մշակի» երեկվայ համարում։ Նախընտրելու կողմից ընտրված է Մեսրոպ Վարդապետ, բայց սխալմամբ տպված է Միրզա Վարդանեան։

—

Այլեքանդրոպոլից մեզ հաղորդում են, որ Դալիթաղչի և Այլեքանդրոպոլի միջև եղած երկաթուղային գիծը վերականգնված է։

—

Մայրաքաղաքի «Новости» լրագրի ասելով Կովկասեան Փոխարքայութեան պաշտօնը պէտք է յանձնվի զինուորական գրաֆ Գրոդեկովին։

—

Վերջին ամիսները մեր շուկայում, մանաւանդ Սալդատսկի բազարում ծախում են մեծ քանակութեամբ շվեյցարական ձևի պատրաստած պանիրներ, որոնց թունաւոր փաճառում են 20—30 կոպ.։ Ոմանք այդ էժան գները բացատրում էին նրանով, որ իբր սերը քաշած պանիրներ են, ոմանք էլ՝ թէ թուրքերից թալանած և էժան գնով պատահաբար ձեռք բերած ապրանք է, իսկ աւելի ձեռնտու անձինք էժանութիւնը (մանաւանդ 30 կոպէկ լիտրն աչքի է ընկնում) բացատրում են նրանով, որ մեր երկրի բազմաթիւ պանրագործարանների ամեն տարի արտասանվում էին Ռուսասանի զանազան քաղաքներ բաւականին մեծ քանակութեամբ պանիր, իսկ այս պարի գործարանների պատճառով ճանապարհները փակվելով, պանրի արդիւնաբերողները չը կարողացան արտասանել, ուստի և մեծ պաշար մնալով, տեղված են ցածր գներով ապացոնել՝ դէպանալուց ազատ պահելու մտքով։ Յամենայն դէպս շատ կարևոր և օգտաւէտ կը լինէր սանիտարական մի հսկողութիւն մեր շուկայում այդ և նման (մանաւանդ Բաքուի գեղ ստացվող ձկնեղէնների) մթերքների վրա մանաւանդ որ այդպիսի ապրանքներ գնողները հասարակ և չունեւոր դասակարգն է։

—

Թիֆլիսի գօտա-հեռագրատան կառավարիչը յայտարարում է ի գիտութիւն հասարակութեան, որ սոյն յունվարի 21-ից սկսած Թիֆլիսի գօտա-հեռագրատան գրասենեակում ընդունում և տալիս են պատճառեցված և հասարակ թղթակցութիւններ և գօտային նամակներ (մարկաներ) սկսած առաւօտեան ժամի 8—2 ցերեկվայ, և 5—7-ը երեկոյեան, ամենայն օր, բացի կիրակի և տօնի օրերից, երը ընդունելութիւնը լինում է մինչև ժամի 11-ը։

—

«Matin»-ի սեղնական թղթակիցը խօսելով կառավարութեան համեմատական յաղթանակի մասին աւելացնում է, որ քաղաքական հորիզոնը պարզ լինելուց հետո է. պէտք է երկիւղ կրել մանաւանդ ազրարային շարժումից որը սկսել է անհանգստացնող չափեր ստանալ և որը իր զարգացման ասպիճանին կը հասնէ գարնանը։ Նա տարածվում է Ռուսասանի կենտրոնումը։ այսպէս յունվարի 7-ին, Սուխոդազում, Պետերբուրգից մօտ, Վարշավայի գծի վրա, գիւղացիները յարձակվել են կայարանի վրա և ամեն ինչ ոչնչացրել են։ Զօրքը ցրել է նրանց։

—

Լուրեր են պատվում, որ մօտ օրերումս Կայսրը պէտք է մի մանիֆեստով ընդհանուր ներում շնորհէ քաղաքական յանցաւորներին։ Այդ ներումը չը պիտի տարածվի միայն այն անձանց վրա, որոնց մօտ գտնվել են պայթուցիկ նիւթեր։

—

Ցայտնի է, որ յունվարի 9-ի տարեդարձը խաղաղ անցաւ Ռուսասանի բոլոր մասերում, գլխաւորաբար Պետերբուրգում, ուր ձեռք էին առնվել ամենախիստ միջոցներ զսպելու ցոյցի որ և է փորձ։ Նոյն օրը, առաւօտեան, սև շրջանակով էր լոյս տեսել միայն «Пет. Газ.»-ն. բայց խկոյն նրա բոլոր համարները գրաւեցին։ Իսկ երգիծաբանական լրագիրների խմբագիրներից շատերը ձերբակալվեցին, որովհետև նրանց թերթերը լոյս էին տանում արեան ինչ որ խորհրդաւոր նշաններով։

—

Հեռագիրներում տեղեկութիւններ կային այն մասին, թէ յեղափոխականների պարագլուխները Ռուսասանից փախչելով՝ իրանց հետ տարել էին փոքր. այժմ պարզվում է, որ այդ փոքրը իրանց՝ յեղափոխական կազմակերպութիւնների փոքրն են, որոնց փախցրել են գրաւման փոխանցից ազատելու համար։ Ասում են, որ յեղափոխականները միլիոնաւոր ռուբլի են փոխադրել Լոնդոն և Պարիզ, վախենալով որ այդ փոքրի տեղը խմանալով՝ կառավարութիւնը չը գրաւէ։ Հակառակ ոստիկանութեան կողմից կատարված մասսային ձերբակալութիւնների, հասատատում են, որ յեղափոխականների գլխաւոր պետերը ազատվել են։

—

Օդեսայի ժանդարմերիական հիմնարկութեան մէջ, յունվարի 10-ի գիշերը մահ է մի անյայտ անձ և այնտեղ գտել մի գժտխային մեքենայ։ Ռումբը հետևեալ առաւօտեան, ժամի 6ին, վազաժամ պայթել է և վիրաւորել է միայն մի ժանդարմի։ Հիմնարկութիւնը իր բիւրեղներով և կամ կարասիներով ոչնչացել է։ Յանցաւորը չէ գտնված։

—

Ինչպէս յայտնի է, քաղաքային ինքնավարութիւնները մի քանի տարի առաջ մեծ ամոնտակութիւններ ենթարկվելուց և նրանց գործունէութիւնը սպասած վիճակի մէջ է մինչև այսօր, այն ինչ հոկտ. 17-ի Բարձրագոյն մանիֆէստը թէ քաղաքային և թէ համայնական ինքնավարութիւնների գործունէութեան շրջանը լայնացնում է և իրաւունքները մեծացնում։ Այս օրերս ներքին գործերի մինիստրութեան մէջ սպասվում է այդ հարցի մասին կարգադրութիւն և, ի դէպս գրական ձևով մշակելու՝ առաջիկայ մարտ ամսին քաղաքային խորհուրդներից և համայնքներից ընտրված պատգամաւորների համառուսական ժողով է գումարվելու՝ ինքնավարութիւնների և համայնավարութեան պլօժենիէն փոփոխելու ենթարկելու ըստ հոկ. 17-ի մանիֆեստից ըղված նոր հիմունքների։ Ժողովին նախարարութեան կողմանէ մասնակցելու են այդ վարչութեան պաշտօնեաները։

—

Թիֆլիսի երկաթգաղարի գլխին այս վերջին ամիսներս, ինչպէս երևում է, բնութիւնը խողվել է. ամեն օր նրա երկաթգաղարի թելերը ճաքճաքումներով տրաք-տրաքվում են, որից գնացքը խանգարվում է և ճամբորդները ստիպված են լինում սառ շարունակել իրանց ուղեմ։ Ուրբաթ, յունվարի 20-ին, երեկոյեան, իշխ. Վաքոնցովի արձանի և Երևանեան հրապարակի մէջ շրջայանապարհ քարշակի թելերը տրաք-տրաքվեցին և այդ գծի վրա շարժողութիւնը ընդհատվեց՝ սովորաբար մի քանի ժամ առաջ։ Նախընթաց օրը նոյն երևոյթը կրկնվեց և Սալի գծի վրա 1/2 ժամ վագոնները մնմանց յանձից կուտակված էին, մինչև վնասված մասերի նորոգելը։ Դարձնում ենք քաղաքային վերանսկիչ մասնաւորվի ուշադրութիւնը ամեն ժամանակ կրկնվող այս և նման անարբերագրգ փիճակի վրա։ Մասնաժողովի պարտքն է միանգամից վերջ տալ այդ անկանոնութիւններին և միաժամանակ՝ երթևեկողների արդարացի ընդդիմութիւններին։

—

Մինիստրութիւններից շատերի մէջ, «Новости» լրագրի խօսքով, ներկայումս կատարելագործ մտած է որ և է կեանք։ Իւրաքանչիւր պատասխանատու ծառայող կամ մաղդրութիւն յանձնվում է մինչև Դումայի գումարվելը։ Մինիստրների կաբինէտի գոգնանութիւնը նոյնպէս դանդաղ և անբոմանգակ է։ Պետական վարչութեան բոլոր թեկերը կենտրոնացած են նրանց գործերի մինիստրութեան մէջ։ Բոլոր մինիստրութիւնների մէջ այն համոզմունքն է արմատացած, որ պէտք է մի կերպ քաշքշել իրանց գոյութիւնը, որ իւրաքանչիւր ընթացիկ աշխատանք մեծ մասամբ վերջը անպէտք է համարվելու։

—

Լուրերի համեմատ, վճռված է թողնել Հեռաւոր Արևելքում 250,000 հոգուց բաղկացած մի զօրաբանակ, որի հրամանատար է նշանակվում Նիժեգորոդի նախկին նահանգապետ գեներալ-լեյտենանտ Ունտերբերգեր։ Դա զինուորական գործի մասին ոչ մի հասկացողութիւն չունի։

—

Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը վճռեց երկաթուղիական հիմնարկութիւնների մէջ ծառայող կանանց իրաւունքները հաւասարեցնել ազատարդկանց հետ։

—

Միջնակարգ դպրոցների ուսուցիչներից շատերը հրաժարական խնդրեց ներկայացրին Պետերբուրգի ուսումնական շրջանի հոգաբարձուին։ Այդ հրաժարականներով ուսուցիչները բողոքում են այն բանի դէմ, որ հոգաբարձուն արձակել է պաշտօնից շատ ուսուցիչներ գործադուլներին մասնակցելու համար։

—

Պետերբուրգում ստացված մասնաւոր տեղեկութիւնների համեմատ, լեյտենանտ Շմիդտի դատաստանական քննութիւնը նշանակված է յունվարի 20-ին։ Վկայ են կանչված 200 մարդ։ Այս օրերս Շմիդտը Օչակովսկի բերդից փոխադրվում է Կէրչ։

—

Դեկտեմբերեան զէպքերի ժամանակ 13 մասնաւոր երկաթուղիներից հինգը գտնվում էին գործադուլ անողների իշխանութեան տակ։ Աքքանական 26 երկաթուղիներից միայն երկուսը չը հպատակվեցին օրինական իշխանութիւններին։ Մատնելով, որ մասնաւոր վարչութեան ժամանակ դժուար է երկաթուղիները կարգապահութեան մէջ պահել, հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը ուզում է շուտով յետ դնել մասնաւոր երկաթուղիները։ Առաջինը յետ կը դնվի Վարշավա-Վիէննայի երկաթուղին, ապա Բիազան-Ուրալեան երկաթուղին։ (Пет. Газ.)

—

Ներկայումս խմբական խուզարկութիւններ և ձերբակալութիւններն կատարվում Յարոսլաւ-Սելօում։ Յունվարի 6-ից սկսած խուզարկութիւնների թիւը շատ մեծացել է։

—

Յունվարի 19-ին գիշերով մի քանի տներ խուզարկեցին Նախալովկայում։ կալանաւորեցին 10 մարդ։

—

Այս օրերս կը հրատարակվի օրէնք ժողովների ազատութեան մասին, որոնք ներկայումս քաղաքապետի նոր կարգադրութեամբ արգիլված են։ Պետերբուրգում։ Օրէնքի նախագիծը մշակված է գերմանական օրէնքների նմանութեամբ։ Ժողովները թոյլ են տրվում, երը յայտնում են ժողովի գումարման մասին ազմինիստրատիվային, բայց ժողովներին պարտաւորական է ոստիկանական պաշտօնեայի ներկայութիւնը։ Ոստիկանութիւնը իրաւունք ունի փակել ժողովը այն դէպքերում, երը հանրօրէնքից որ և մէկը թոյլ կը տայ իրան վիրաւորել Արքայական տան պատկանող անձանց կամ ժողովում կը լալի կոչ դէպի ապատամբութիւն կամ այլ բանի գործողութիւններ։ Ժողովները թոյլատրվում են միայն փակ շինութիւններում, իսկ փողոցային միաժողները կարգելվեն։ Այդ օրէնքների հրատարակութեան հետ միաժամանակ լուրեր են պատում մօտ ապագայում բարձրագոյն զպրոցներ բանալու մասին։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Յունվարի 19-ին, ցերեկվայ ժամը 12-ին Թուրքահայաստանի Պօղոս Յովհաննէսեան Կոստիկեանցը, որը բնակվում է 8-րդ քաղաքամասում (Պետերբուրգ. Ռեդակտիրեան), յայտնեց պլիսաստանի, որ նրա բացակայութեան ժամանակ, յայտնի չէ թէ ում ձեռքով, ընտարանի դուռը կոտրելով, գողացված է գօշկի տակից 300 ռուբլի փող, պիշակ և մեքենայ։

—

Կաթնարանատէր Գր. Սարգսովը (Պուշկինսկի փող.) յունվարի 20-ին, երեկոյեան ժամը 9-ին փակեց կաթնարանը և ուտեստեղէն տուն, որը գտնվում է Սլօբոդսկոյի փող. վրա 5 քաղ. գնա ընտարանը չը մտած, նրան փողոցից կանչել են 3 անյայտ մարդիկ, որոնցից մէկը յարձակվեց Սարգսովի վրա և սրով 3 մահացու վերք հասցրեց չարագործները անյայտացան։ Սարգսովի գիակը ուղարկված է Մէրչէլեան հիւանդանոց։

—

Յունվարի 21-ին, առաւօտեան ժամը 11-ին Գօրու գաս. բնակիչ Դաւիթ Ա. Յարեշվիլին Գուլ գետի վրա պարսիից վերև գալ է սեղան 45 տարեկան մեծ գիակ գիպի վրը փաթաթված էր փայտաներով և բարակ թելով պինդ կապած։ Սկզբնական հարցափորձից պարզվեց, որ մեռածը Թիֆլիսի բնակիչ Հեղինէ Նազարեանն է։ Հարցափորձը շարունակվում է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵԳԻՊՏՈՍԻՑ

—

Գահիրէ, դեկտեմբերի 4/17-ին

Մենք լուրը։ Գահիր

500 ֆրանք (200 բուբլի) տալ, ի հաշիվ իրեն և ամբողջ ընտանիքի։

Միութիւնը ուրեմն կազմուած է հետևեալ հայ ունևորները պիտի բոլորին շուրջը նստակայմ կեսրօնին որ աշխարհիս ամէն կողմը մասնաճիւղեր պիտի կազմէ։

Միութեան կանոնագիրը կը պատրաստուի, ու, եթէ լաւն տայդ է, պիտի հրատարակի, քաղաքական բարձրագոյն իշխանութեան հաստատութիւնը ստանալէ յետոյ։ Արդեօք առաջնորդարանին վարչացումը չը բաւէր, որ օտար միջամտութեան դուռ կը բացուի մեր ներքին գործերուն մէջ։

Այս օրուան համար, այս կարճատև տեղեկութիւնները, «քան պաշտօնական յայտարարութեան» հաղորդել բաւական կը համարիմ, վերապատելով ուրիշ առթի մը, իմ մասնաւոր տեղեկութիւններս։

***

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԷ

Լայպցիգ յունվարի 18-ին

Նորմալ վիճակի մէջ չէ։ Երերուն հիմքերի վրա է յենված Գերմանիայի ներկայ քաղաքական կանոնը, որի ազդված յատակի յուզումները շատ շուտով երես կելնեն և թէ ինչ փոփոխութիւններ կառաջանան նրա վրա, այդ դեռ գուշակելու ժամանակ չէ։ Դասակարգները դէմ առ դէմ կանգնած անաւորը և երկիւղալի, իրար բաղխելու են պատրաստված և ամէն մէկը ներկայ քօպէում իր ծրագրած պլաններն է յառաջ տանել և գլուխ բերել ցանկանում, բայց որոնց իրականացնելը առանց դասակարգների պաքարելի լինել չէ կարող։ Գերմանիան կամաց-կամաց նոր յեղափոխութեան է մօտենում, որի շշուկները արդէն օդի մէջ է տարածված և շատ ու շատերը պատրաստ են ընդունելու, որ այդ յեղափոխութիւնը ան դայման լինելու է և նա մտնելու այն ժամանակ, երբ Գերմանիան մի արտաքին պատերազմ ունենայ։

Բանուորական բանակները ահաւոր կուլ են պատրաստում, որին իբրև նշանաբան կոչ. Դրեզդենի փողոցների սարյատակներին թափված բանուորների արիւնը. զերմանացի խաղաղ, օրինական հիմքերի վրա կանգնած և փողոցային ցոյցերը չը սիրող բանուորն էլ արիւն թափելու ճանապարհը անցաւ. սա արդէն մի լուրջ քաղաքական զէպք է։ Կարծես կատարվում է Էնգելսի 1883 թիւի այն գուշակութիւնը, թէ երբ այն ժամանակվայ բակացիայի շտեմարան Ռուսաստանի յեղափոխութիւնը կը գայ և արօրատփովը կը վերջացնի, նորանոր յուզումներ կառաջանան Աւստրիայում, Գերմանիայում, մանաւանդ երբ վերջին ռուսական զորձերին միջամուխ, և ընդհանրապէս ամբողջ Եւրօպայում, որի քաղաքական կեանքն ու զրութիւնը հիմնական փոփոխութիւններ կը կրէ։ Ներկայ իրականութիւնը ցոյց է տալիս, որ այդ գուշակութիւնների մի մասը կատարվել է և միւսն էլ կատարվելու վրա է։

Գերմանիայի բանուորական փողոցային մանիֆեստացիաների բուն նպատակը չէ միմիայն համայն, սամմանական ընտրութեան իրաւունքը, այլ դա մի պատրուակ է, ինչպես բացատրում են ընկերավարական օրգանները, աւելի մեծ և լուրջ ռեֆորմների համար, որոնց միայն մարդկային արեան գնով կարելի է հասնել, որովհետև մարդկային հասարակական կեանքի հիմնական փոփոխութիւնները այլ կերպ չէ լինում։ Եւ այժմ արդէն սոցիալ-դեմոկրատների բանակներում օրվայ խնդիր է դառել եկող ժամանակվայ ցոյցերի հարցը։

Կոչը չեն միւս իշխող դասակարգերը, որոնք պարզ տեսնում են, թէ ինչ է կրուվում ու դարձնվում բանուրական բանակներում, թէ ինչ յոյսերի և տենչերի շուրջն է պատում այժմեան նրանց գործունէութիւնը և թէ ինչ ահաւոր վտանգ է սպառնում մօտագայում։ Եւ նրանք էլ են պատրաստվում հարձակներ տալու և սառնալու, իրանց ուժերը հաւաքում բանուրների դէմ։ Բիւլօվը Բայատագումն է խրախուսում բանուրական շարժումների դէմ և նրանց վարիչներին տարբեր ցանկանում։ քաղաքական տերունամոլ օրգանները ոգևորված պրօպագանդ են անում այդ շարժումների դէմ և բանուրներին յանձին յիշեցնում, որ եթէ նրանք յեղափոխութիւն առաջացնեն, այն ժամանակ նրանց դէմ դուրս կը գան միւս դասակարգերը անողաձեղութեան դէպքում ճնշելու ամէն մի շարժում և որ, որքան զօրեղ լինի բանուրների տուած հարուածը, կրկնակի ուժեղ է լինելու հակահարուածը, որքան յանդուգն լինի նրանց դիմադրութիւնը, աւելին է լինելու պատասխանը։ Այս խօսքերը խոհապէս վախեցնելու նպատակով պատասխանութիւն չէ. սա հշմարտութիւն է, որ եթէ Գերմանիայում մի լուրջ յեղափոխութիւն պայթի, միւս դասակարգերը դուրս կը գան զէնքով ճնշելու այդ շարժումները, եթէ զօրքը չէ բաւականացնում։ Այսպերի դասակարգերը Ռուսաստանի պէս չեն, որ յեղափոխութեան ժամանակ որոշ չափով իրար օգնեն, այլ իրար արեան ծարաւ ազգերի պէս գէմ ու դէմ են կանգնած դասակարգային կատրածները անսպասելի բան չեն այստեղ։

Ով ճանաչում է գերմանացի ուսանողին, զինուորին, քաղաքացուն և վերջապէս գերմանական թիրու ոգին, նրա համար զարդ պէտք է լինի այս։

Մասայական ցոյցերի և զուցէ զրանց յաջորդող բուն յեղափոխութեան հարցը հրապարակի վրա է դրված և քննվում է։ Թէ գլուխ կը գայ այդ ապագայի հարց է, բայց մի բան ճշմարիտ է, որ եթէ յեղափոխութիւն լինի, դա մի սարսափելի կատաստրոֆ է դառնալու և իր արեան գետերով շատ ու շատ յեղափոխութիւններ է մտացնելու։

Գ. Եղիշեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Թէ քանի Բերլինում բոլոր միտինգները խաղաղ անցան, բացառում է գերմանական մի շաբաթաթերթ՝ «Der Deutsche»-ն հետևեալ կերպով։ «Այս բոլորը, 1848 թիւ և ուսական յեղափոխութեան նման շարժումներ չեն կարող տեղի ունենալ Բերլինում։ Փողոցներում ցոյց տարքերը առաջարկութիւն անգամ չունեն բան ինքեան նկատվում է մի յանցաւոր գործողութիւն։ Եւ եթէ սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը փորձէր կազմակերպել այդ կարգի ցոյցեր, նրա գործադիր կոմիտէները անմիջապէս կը ձերբակալվեր։ Եթէ Բերլինում տեղի ունենային յեղափոխական ցոյցեր, քիչ ժամանակվայ ընթացքում կը ճնշվեին։ Բերլինի ոստիկանութիւնը մշակել է ոօրիլեզացիայի մի նախագիծ, ճնշելու համար մայրաքաղաքում ժողովրդական յեղափոխութեան ամէն փորձ. նախագիծ՝ որը նոյնքան կառաբեալ է, որքան գերմանական բանակի մոբիլիզացիայի ծրագիրը, մի օտար պետութեան հետ պատերազմի դէպքում։ Հէնց որ շարժման մի փորձ տեղի ունեցաւ փողոցում, ոստիկանութիւն այդ ծրագիրը պիտի գործադրվի։ Ոստիկանութիւնը քաղաքը բաժանել է որոշ թիւով սեկցիաների և իւրաքանչիւր սեկցիայում, բաժանմունքում, ձեռք անվնասիրի միջոցները մշակված են մանրամասն ու մանրակրկիտ կերպով։ Եթէ յեղափոխական ամբոխը գիսէր քաղաքի կենտրոնը յարձակվելու համար կայսերական պալատի և կառավարական պաշտօնատների վրա, կարելի էր խլոն քանակով փոքրիկ խմբերի բաժանել նրանց և այդ խմբերից իւրաքանչիւրը շրջապատել ոստիկանութեամբ և զօրքով։ Այդպիսով իշխանութիւնները հնարաւորութիւն կունենային դեռ մեկ ու մի քանի ամբոխ ունենալ դէպի քաղաքի կենտրոնը, ոստիկանութիւնը ընդհանուր փորձեր է կատարում։ Այդ երկու դէպքերում էլ ոստիկանութիւնը ամբողջութեամբ իրագործել է իր նախագիծը և եթէ յեղափոխական մի որ և է շարժում պատահի, անկասկած նոյն միջոցները զործ կը դրվին ճնշելու համար նրան։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

20 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, յունվ. 19։ Սիւոդին կից կազմվում է խորհուրդ կարդի բերելու Անդրկովկասեան թիւերի վիճակը։ Պետական խորհուրդը վերջացրեց ընկերութիւնների և միութիւնների մասին եղած ժամանակաւոր կանոնագրութիւնների մի մասի քննութիւնը։ Ընկերութիւնները և միութիւնները հիմնվում են հավաքնի կարգով, ընկերութիւնները փակելու իրաւունքը կը վերապահվի իշխանութիւններին կամ յատուկ դատաստանական հաստատութիւններին, իսկ միութիւններ փակելը—ներքին գործերի մինիստրին։ Երեկոյեան ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը կը ճանապարհվի դէպի հարաւային և Պրիվոլգայի գծերը տեսչական նպատակներով։ Մինիստրների մասնաժողովի նիստում կը քննվի տեսարի մինիստրութեան առաջարկութիւնը ինքիցներական ընկերութիւնների կանոնագրութեան մէջ հրվանների համար սահմանափակ որոշումներ չը մտցնել։

Մոսկվայի տպագրականութեան պարագլուխ Իշան Տրուբեցկոյը, որ այսօր գնացել էր Ցարսկոյէ-Սէլօ, ասաց մեր թղթակցին, որ մասնաւոր սեկցիականութեան սկզբունքը հզօր պաշտպաններ ունի և կը մնայ սուրը և անձեռնմխելի։

ՆՈՎՈՐՈՍՍԻՅՍկ, յունվարի 19։ Դեկտեմբերի 28-ից մինչև յունվարի 1-ը Մոչիում տեղի էին ունեցած զինված ընդհարումներ յեղափոխականների ու տեղական զօրքի մէջ, որոնք բաղկացած էին 23 պէխոտիցիներից և 50 ոստիկանական պահակներից։ Ապստամբները մօտաւորապէս 1000 հոգի էին։ Նրանք պաշարել էին տեղական զօրքին զօրանոցների մէջ. մի պահակ սպանված է, 8-ը վիրաւորված է, վիրաւորված է և մի զինուոր տրցանձգութեան ժամանակ։ Ապստամբները կողոպտեցին Մոչիի ամբարանոցները, սպանեցին կայազրանը կառավարող գրագրին, Օկրուգի կառավարչի զրանեանակի բոլոր գործերը այրեցին։ Երեկոյեան յունվարի 1-ին զօրքը տեղավորված եղաւ անձնասարը լինել։ Բանտից նետերով զօրք գալուց յետոյ խորհրդարանների պարագլուխները փախան, տանելով իրանց հետ գանձարանի գրամարկղը, որը և վերադարձվեց յունվարի 4-ին ձեռք չը արված։ Այժմ հանգստարար հանգստութիւն է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, յունվ. 19։ Կուրսկի նահանգի Շերդրովկի գաւառի գիւղացիների պատգամաւորութիւնը, որ յունվարի 18-ին ունկնդրութիւն ունեցաւ Ցարսկոյէ Սէլօյում, կայսրը ասաց՝ «Ես շատ ուրախ եմ ձեզ տեսնելու։ Դուք, եղբայրներ, ի տարէէ պէտք է իմանաք, որ ամէն մի սեպհականութեան իրաւունք անձեռմխելի է։ Այն ինչ որ պատկանում է կալուածատիրոջը, նրանն է, իսկ այն ինչ որ պատկանում է գիւղացուն, նրանն էլ պատկանում է։ Հոգը, որ ստանում են կալուածատերերի իրաւաբեան նեղքոյ, պատկանէ նրանց նոյն անձնաբարի հիմունքներով, ինչպես որ ձեր հողը պատկանում է ձեզ։ Այլ կերպ լինել չէ կարող, այդտեղ վէճ չէ կարող լինել։ Ես ուզում եմ, որ դուք այդ բանը հաղորդեք ձեր համագիւղացիներին։ Ես կը հոգամ գիւղացիների մասին, նոյնպէս ձեր կարիքները։ Ինձ համար թանկ են։ Ես նրանց մասին էլ կը հոգամ շարունակ այնպէս, ինչպէս որ իմ հանգուցեալ Հայրը։ Պետական Դուման կը գումարվի և Ինձ հետ միասին կը խորհեն թէ ինչպէս լաւ կը լինի անել։ Ինձ վրա դուք ամենքդ էլ կարողեք յուսալ, Ես ձեզ կօգնեմ, բայց կրկնում եմ, յիշեցէք միշտ, որ սեպհականութեան իրաւունքը սուրբ է և պէտք է անձեռնմխելի մնայ»։

ԿԻԵՎ, 19 յունվարի։ Ժիտոմիրի, Սարնի և Բերիեվ կայարաններում զինուորական դրութիւնը վերացրված է։ Գենեռալ Բեզօբրազովի զօրախմբի մի մասը եկաւ այստեղ։ Համարանում խուզարկութիւններ եղան։ Կալանաւորված են զօրենա Բոգօյավլենսկի և 4 ուսանողներ։

ՄԻՆՍԿ, 19 յունվարի։ Նահանգապետ և ոստիկանապետ կեանքի դէմ փորձ անող յանցաւորները յանձնված են զինուորական դատաստանին։

ՁԵՐՆԻԳՈՎ, 19 յունվարի։ Նահանգապետ Խվոստովի կեանքի դէմ փորձ անողը դատապարտված է մահվան պատժի կախաղանով, իսկ նրան զործակից հրեայ Լէյկինը—տասը տարվայ տաժանակիր աշխատանքի։

ԿԻԵՎ, յունվարի 19։ Կառավարութիւնը գրաւել է Սամմանագրական-ռամկավար կուսակցութեան օրգան «Սվոբոդա և Պրաւօ» թերթը։ Պրոֆէսսոր իշան Տրուբեցկոյը, որ այդ կուսակցութեան թեկնածուն է Դումայում, հեռացաւ այդ կուսակցութիւնից։ Բոլոր կուսակցութեան պատկանող լեհերը, հնարաւորութիւն չունենալով Դումայի համար բնարելու իրանց պատգաւորը, վճռեցին աջակցել ռուսաց Սամմանագրական-ռամկավար կուսակցութեան թեկնածուի ընտրութեանը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 յունվարի։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի նախագահութեամբ պրոֆեսորների նիստում համաարանների բէֆորմի մասին, քննվեց ուսանողների խնդիրը։ Հաստատվեց այն կանոնը, որ ուսանող և ազատ ունկնդիր կրնդունեն երկու տեսակ ուսանող ազգութեան և դաւանութեան խորութեան։ Ուսանող կընդունվին միջնակարգ դրոցների ատեստատներ կամ համաուսարան վկայական ունեցողները։ Ուսանողների ընդունելութիւնը կը լինի տարին երկու անգամ, ամէն մի կիսամեակի սկզբում։ Ուսանողները և ազատ ունկնդիրները ազատ են դասախօսութիւնները յաճախելու կամ ոչ։ Ուսանողներին իրաւունք է տրվում ազատ անցնել մի համալսարանից մէսը, նոյն ֆակուլտետը։ Վճարը 40 ր. է սահմանված կիսամեակի համար։ Հանրագրը յօգուտ պրոֆեսորների վերացրված է։ Համալսարանի շինութեան մէջ ուսանողական ժողովները թոյլատրվում են միայն խորհրդի թոյլատրութեամբ։

Ըստ պաշտօնական տեղեկութիւնների, Ռուսաստանի արտաքին առևտրի (Իտալական սահմանի վրա, 1905 թ.) հաշուեկշիռը ցոյց է տալիս, որ արտահանումը 694 միլիօնով աւելի է քան ներմուծումը։ Արտահանութիւնը հասաւ անօրինակ զումարի—992 միլիոն, ներմուծումը—523 միլիոն։

ՊԱՐԻԶ, 19 յունվարի։ Ս. Կլօթիլդի եկեղեցում կայացաւ 15 ցոյց եկեղեցական մեղքերի ցուցակագրման ժամանակ։ Ոստիկանութիւնը և զօրքը ցրվեց ցուցարարներին։

ՊԱՐԻԶ։ Ս. Կլօթիլդի եկեղեցու ցոյցի ժամանակ վիրաւորված են մօտ 50 զինուոր և ոստիկաններ և 30 ցուցարարներ։ Այդ ցոյցերի առիթով ազդակից վիճառութիւններ տեղի ունեցան պարլամենտում։ Բամելը յանդիմանում է կառավարութիւնը օրէնքների եղծման և սպառնութիւններ կատարելուն մէջ։ Նրան կարգի են հրաւիրում։ Ի վերջոյ մեծամասնութեամբ ընդունվեց Բուվիեի հաստատութիւն առած քանակը անցնել հերթական գործերին, արտայայտելով պարլամենտի հաստատամտութիւն, որ կառավարութիւնը կապահովէ եկեղեցին պետութիւնից բաժանելու օրէնքի գործադրութիւնը։

21 յունվարի

ՎԱԼԱԴԻՎՈՍՏՈԿ, 20 յունվարի։ Բերդապահի պաշտօնավար գեներալ Արտամանով դիմեց մի կոչով քաղաքացիներին, որով հրաւիրում է վերջ տալ ներքին երկպառակութիւններին և դիմել խաղաղ աշխատանքի, չը խանգարվում ուրիշի գործերին, մանաւանդ զինուորականներին։ Քաղաքային զօրքը և բերդապահները պէտք է կատարեն իրանց զինուորական պարքը հայրենիքը պաշտպանել թշնամու այժերից, առանց մասնակցելու քաղաքական հարցերի մէջ։ Ճանաչելով և սիրելով զինուորներին, զինուորը խօսանում է ինչ որ հնարաւոր է անել նրանց կարիքներին բաւարարութիւն տալու համար։ Մատնացոյց անելով այն բանի վրա, որ նա հեռագրով խնդրել է ներում շնորհել անցած անկարգութիւնների մէջ յանցաւորներին, զինուորը ընակիչներին և զինուորներին կոչ է անում օգնել իր ձգտումներին մոռացութեան տալ անցեալի տխուր հետքերը ու վերանորոգել քաղաքը, նաւահանգիստը և փառս Ռուսաստանի։

ԿԱՄԼՇԻՆ, 20 յունվարի։ Օլուֆիևը հիմք դրեց հոկտեմբերի 17-ի կուսակցութեան կազմակերպութեան։ Գոյութիւն ունեցող սամմանադրական-ռամկական կուսակցութիւնը, որին զուրկ են կանգնել բանուորները, անգործութեան է մատնված։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունվարի։ Արտաքսվածներից մեր թերթերի մէջ մոտ լուրերի առիթով թէ Սիբիրիայի, Բօլգարիայի և Զերնօգորիայի մէջ պաշտպանողական դաշինք է կապված, Սիբիրիայի դիպլոմատիական գործակալը յայտարարեց, որ նրա մասին ոչ մի տեղեկութիւն չունի։ Լուրերը գալիս են Աւստրիական ագրիտներից, և երևի ծագել է շնորհիւ Աւստրիայի դժգոհութիւնից այդ երկիրների մէջ կայացած մաքսային դաշնագրերի պատճառով։ Նրանք Աւստրիայի երկիւղի հետևանք են, որ մի դուցէ այդ դաշնագիրը դուրս գայ զուտ տնտեսական համաձայնութեան սահմանից։

ԲԵՐԴԻՉԵՎ, 20 յունվարի։ Կազմակերպված է առևտրականների ընկերութիւն կռվելու ազիպիսի երևոյթների դէմ, որոնք առևտրի և արդիւնաբերութեան արդէն են հանդիսանում անգործներին, օգնում են զործ տալով և յատուկ իրանց համար պահակներ կազմակերպելով ոստիկաններից և զօրապահակներից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունվարի։ Յայտարարված է «Օրէնքների ժողովածուներ»-ի մէջ Պետական Խորհրդի կարծիքը զարձրագոյն հաստատված զրամանքի տուրքերի մասին եղած օրէնքների մի քանի փոփոխութիւնների վերաբերմամբ։ Դրամագլուխների, որոնք իրանց հարստութեամբ համարվում են ձեռնարկութիւններ, տուրքերը աւելացվում են 15 կօպ. միլիոներից—20 կօպ. ամէն մի 100 բուբլի զրամագլխին։ Այն ձեռնարկութիւնները, որոնց զուտ օգուտը 3%-ից աւելի է լինում, բացի իր հիմնական զրամանքի հարկից և զրամագլխի տուրքից, օգուտից նոյնպէս տալու վճար, հետևեալ աւելացնելով նրան։ Այսպէս օրինակ, 3%—4% զուտ օգուտ տացողները վճարում են 3% մինչև 20% տացողները—վճարում են 14%, 20%-ից աւելին տացողները վճարում են բացի 14%-ից էլի 10%-ն այն գումարից, որը բարձր է 20%-ից։ Գրաւված են «Բարիկալ» և «Վեչերնի Գոլոս» թերթի այսօրվայ համարները։ Դատաստանական պալատի վճիռը, որով արդարացնում էր Շաբէլսկուն, սենատը հաստատել է։

Ներքին գործերի մինիստրին ներկայացան թուրքական համաուսական ժողովին եկած պատգամաւորութիւնը Տավրիդեան մուֆթի կարապետի դեկավարութեամբ։

ՌԱՄՄՈՒՏ, յունվարի 20։ Սմենայն օր գալիս են նոր խմբեր հանքերը և գործարանները վերագրաւող բանուորներից։ Դեռ ևս գործերը դանդաղ են ընթանում Դոնեցկի մասում վագոններ չը լինելու պատճառով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, յունվ. 20։ Յունվարի 19-ի պրոֆէսորական խորհրդում համալսարանների բարեփոխութիւնների մասին անհրաժեշտ է համարվել պրոֆէսորական պատժական գատարանը, որին կազմելը յանձնվում է խորհրդներին։ Քննութեան են յանձնվում հետևեալ գործերը՝ 1) Համալսարանների շինութեան և հաստատութիւնների մէջ կարգը և խորհրդի հաստատած կանոնագրութիւնը, 2) Այնպիսի յանցանքների համար, որը ձգում է համալսարանի վարկը, 3) Ուսանողների մէջ պատահած ընդհարումների մասին։ Ամենաբարձր պատիժը, որ կարող է նշանակել գատաւանը, ընդունվում է հեռացնելը համալսարանից։ Արտաքին վէճերի համար, որ տեղի են ունենում ուսանողների մէջ, նշանակված են կանոններ, որ համալսարանի ընդարանները ուսանողները և ազատ ունկնդիրները պարտաւոր են պահպանել խորհրդի որոշած օրէնքները։ Վերահսկողութիւնը համալսարանի պատերի մէջ պահպանում է տեսչին կամ նրա օգնականին, որ վարվում է խորհրդի որոշած կանոնագրութեան համաձայն։ Հանրութիւնը պէտք է վերաբերվի միայն արտաքին կարգապահութեան, բոլորովին հեռացնելով անարգելասալի տարրերին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՍԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԼԱՍԱՐԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱԹԱԽՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԼԱՍԱՐԵԱՆ,—11—12 ժ. վիրաբուժութեան, վիներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
ԶԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային
Զ. Ի. ԱԽԵՏԻՄԵԱՆ—11—12 ժ. մորթու, վիներակ. և վիրաբուժութեան։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՄԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳԻՆԵԿՈՒԹԵՐՆԵՐ ՇԱՏԵՐԻՆԻՆ—1½-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
ԵՐԵՏՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց 5 և 3տարեանոց։
Ա. Դ. ԱԲԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱԼԱՍԱՐԴԻԱՆ—7½ ժ.
Գ. Ա. ԱՐԴԱՆՈՒԱՆ. Կատարում է մեկրօ-ցիմիական և բակտերիոլոգիական հետազօտութիւններ։
Վճարը 50 կ. լաբորատորիայի ձրի։ Համաձայնվելի (կոնսիլիում) և օգնականի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ
բժշկապետ Բ. ՆԱԼԱՍԱՐԴԵԱՆ

Մի հայ երիտասարդ

խնդրում է պաշտօն ուսուցչի, հաշուապահի գանձապահի և այլ յարմար գործի. կարող է գնալ և ուրիշ քաղաք կամ գիւղ։ Վարել է երկար ժամանակ հաշուապահի պաշտօն և ունի վկայականներ։ Դիմել՝ Сергѣевская ул. Правленіе Тифл. Нефтепромышл. Т-ва Бабаянцу։ (ա. օ.) 3—3

Շուրջ նորակ դերձակուհի ընդունում է չատ մասչերի գնելով պատուէրներ կանանց և երեխաների համար զբաղեցնում և վերագրեանոներ։ Գործի ճշդութեան մասին պատասխանատու է։ Абась-Абадская ул. д. Амирова. Շուշանիկ Յովհաննիսեան։ 3—3

«ԸՆԿԵՐ»

շաբաթաթերթի № 3 լոյս տեսաւ բովանդակութեամբ։ Արձիճի հեղեղը։ Քրիստոնէութիւն թէ քաղաքականութիւն։ «Ընկերիս»։ Ազատված գիրը (եղերերգութիւն)։ Ընկեր (պատմածք)։ «Զկնորս» ընկերին։ Բանաւորների բարոյական վիճակը։ Տ. Նազարեանի նամակը։ Ալիքսանդրապօլի թատրոնը։ Համարը արժէ 6 կոպ. Հասցէ՝ Тифлисъ. Редакція «Ингеръ (Товарищъ). Տարեկան բաժանորդագրութիւն է 3 բուբ։ Ամբ. հրատ. փիլ. դկ. Ս. Թառայեանց։

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան

Մասնագէտ մանկական, վիներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Թօլստոյեան պրոսպեկտի և Կարապետական փողոցի, տուն Թումանեանի։ Մուտքը Կարապետի փողոցից № 2։
(ա. օ.) 76—300

ԲԺ. Ա. ՄԻՒՌԹԱՐԵԱՆ

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վիներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Մօտ՝ Գալ, անկիւն Բերուսովսկի և Պակեվիչա փող. № 33/15 տ. Մ. Բրիտանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա. օ.) 35—100

Անցեալ կիրակի Թիֆլիսի էժանագին դրադարանի դահլիճում չը կայացաւ ընդհանուր ժողով, ներկայ եղող անդամների պակասութեան պատճառով, ուստի առաջիկայ կիրակի ամսի 22-ին ՀՐԱՒԻՐՈՒՄ են ժողովականները նոյն տեղը առաւօտեան ժամը 12-ին, դրադարանի մասին վերջնական վճիռ կայացնելու համար։ (շ.կ.) 2—2

ՄԱՆԹԱՇԵԱՆԻ ԿԱՐԳԵՐ
ԹԱՂԱՂԱՆԻ ՄՕՏ
(Манташевские ряды)
ԵՐԿԱԹԱՂԱՇԱՌԻ ԻՄԱՆՈՒԹ
Դարիր Եսայեան Առաքելեանցի

Յայտարարում եմ ի դիտութիւն յարգելի ժողովրդին և իմ պ. պ. կլիենտներին թէ Թիֆլիսի և թէ օտար քաղաքների, որ իմ խանութները, որոնք կային թէ Թուրքերի Մայդանում և թէ Սալլատսկի բազարում, ես անցեալ տարվայ նոյեմբերի 22-ից փոխադրել եմ մի նոր տեղ, մի ընդարձակ խանութ Բազազեանի մօտ, Մանթաշեանցի նոր շէնութեան մէջ, և դրա համար էլ յայտարարում եմ, որ այն բաց հաշիները, որոնք վերաբերում են իմ վերոյիշեալ զադարեցրած խանութներին, պէտք է մաքրվեն իմ նոր խանութում։ Յուսով եմ, որ բոլոր իմ կլիենտները չեն թողնի իմ նոր խանութը առանց ուշադրութեան։
1—10 (հ. կ.) Յարգանօք՝ Դ. Ե. Առաքելեանց

Կենտրօնական գրախանութում

Թիֆլիսում վաճառվում են հետևեալ գրքերը
Ահարոնեան Ա. Լուսթիւն. վէպ գ. 60 կ.։ Մարկի Սուրբ. գ. 1 ր., Բաալիայում. գ. 1 ր. 50 կ.։ Արարը. գ. 80 կ.։ Պատկերների ա. հատոր, գ. 1 ր.։
Բարխուդարեան Գ. Բանաստեղծութիւններ. գ. 1 ր.։
Լէօ. Մէլիքը Ազվիկը. գ. 1 ր. 50 կ.։—Ս. Մեսրոպ. գ. 75 կ.։—Ռուսաց այոց գրականութիւնը սկզբից մինչև մեր օրերը. գ. 1 ր. 50 կ.։
Շերվանզադէ. Եւգինէ. գ. 50 կ.։—Զուր յոյսեր. գ. 1 ր.։ Յաւարարը. գ. 50 կ.։—Նամուս. գ. 1 ր.։ Քասու. գ. 1 ր. 50 կ.։ Ժողովածու—ա. ր. գ. հատոր. խրատքանչիւրը 1 ր. 50 կ.։
Պալասանեան Սա. Հայոց պատմութիւն սկզբից մինչև մեր օրերը. գ. 1 ր. 50 կ.։
Փափազեան Վ. Պատմուածքներ. գ. 50 կ.։ Վասիլ. գ. 1 ր. 50 կ.։ Տուրքաի յիշողութիւններ. գ. 20 կ.։—Սանթօ. գ. 30 կ.։ 1—1

„Գուտտենբերգ“ գրախանութում վաճառվում են

Մ. Արեղեան. Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու հայոց պատմութեան մէջ, Վաղարշապատ. 1901 թ. գինն է 1 ր. 50 կ.։
» Ժողովրդական խաղեր. (ուսուցմ.). արտասպ. «Արարատ» ամսագրից, Վաղարշապատ. 1905 թ. գ. 50 կ.։
» Der Armenische Volkscsaube inaucural-dissertation, Leipzic. 1899 թ. գ. 1 ր. 20 կ.։
Ս. Պալասանեան. Գործնական քերականութիւն հայերէն լեզուի. մասն ա. Թիֆլիս. 1885 գ. 1 ր.։
» » » » հատոր բ. Թիֆլիս. 1869 թ գ. 65 կ.։
» » » » հատոր գ. Բաղդասարութիւն. Թիֆ. 1887 գ. 20 կ.։
Ն. Սիմէոնեանց. Ընդհանուր աշխարհագրութիւն ա. տարի, նախակրթարան. Թիֆլիս, 1880. գ. 35 կ.։
» » » » գ. տարի, մասն քաղաքական. Թիֆ. 1880. գ. 60 կ.։
Ե. Բ. Երզնկեանց. Մանկական երգարան. Թիֆլիս, 1880. գ. 20 կ.։
» Զատկագրեալ մանկական երգարան. Վաղարշապատ. 1880. գ. 40 կ.։
» Զատկագրեալ ազգային երգարան. Վաղարշապատ. 1882. գ. 80 կ.։
Յ. Նազարեանց. Համառօտ քերականութիւն աշխարհագրական. Թիֆլիս. 1887. գ. 20 կ.։
Զ. Գրիգորեանց. Տարրական նախապատրաստական գիտ. № 1 Զուր. Թիֆլիս, 1893 գ. 35 կ.։
Նալա ու Դամայանդի, Հեղինակաստանի հեքիաթ. Թիֆլիս. 1877. գ. 20 կ.։
Զ. Գրիգորեանց. Մանկութիւն. (բացատրական ձեռնարկով). Թիֆլիս, 1895. գ. 50 կ.։
Պօլսէնսպերիալ. կատակերգ. 2 արարած. թարգ. Յ. Նազարեանց. Թիֆլիս, 1878. գ. 20 կ.։
Առաղջութեան կանոններ, Վենեկիկ. 1850. գ. 10 կ.։
Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенбергъ“, Д. Галустянъ. 176 1—1

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԱՆՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ» — «MESSAGERIES MARITIMES».

30 ին յունվարի (12-ին փետր. ըստ նոր. տ.) մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը հանգիստով Տրապիզոն, Սամսուն, Կ. Պոլիս, Իզմիր, Զմիւռնիա, Պիրէյ, Քանէ Մարսէյլ։ Հավը և Լիսոն։
Ուղղակի հաղորդակցութեան տուսակները՝ մինչև Պարիզ, Նիւյորք և մինչև Շանղհայ, (Զինաստանում), կարելի է ստանալ Թիֆլիսում պատասխանատու գիտերից։
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Ցանդրանին, նախկին Աղբրանու գպրեբչում, թիւ 127 գրատնակաց, հեռախօս՝ թիւ 608։ Գրասենեակը բաց է 10—2 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան, բացի կիրակի օրերից։ 1—1

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1906 ГОДЪ
НА ГАЗЕТУ
Тифлисскій Листокъ.
XXIX годъ изданія.

Въ 1906 году газета «ТИФЛИССКІЙ ЛИСТОК